№ 34 ԿԻՐԱԿԻ, 14 ՓԵՏՐՎԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

1910
ԵՐԵՍՈՒՆՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԻՐԱԿԻ, 14 ՓԵՏՐՎԱՐԻ № 34

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228

ՄՇԱԿ

Հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction «MSCHAK».

ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 10 ՌՈՒԲԼԻ

12 ամսվ.՝ 10 ր., 6 և 7 ամսվ. 6 ր., ամսակ. 1 ր. Ամերիկա՝ տարեկան 6 դոլլար, Եւրոպա՝ 32 ֆր., Պարսկաստան՝ 10 ր., Թիւրքիա՝ 120 ղրուշ: Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, նոյնպէս և 40 կոպ. (կարելի է և նամակադրոշմով):

Յայտարարութիւնների համար վճարում են. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին 20 կոպ., վերջին երեսի վրա՝ 10 կոպ.: Կովկասից դուրս յայտարարութիւնները ընդունվում են բացառապէս Торг. Домъ „Л. и Э. Метцль и К°“ ֆիրմայի միջոցով՝ Մոսկվայում, Պետերբուրգում և Վարշավայում:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Աննա Գրիգորեան և Նիկողայոս Դաւթեան Մասումեանները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր տագր, իսկ երկրորդը իր եղբոր՝

Գրիգոր Դաւթեան ՄԱՍՈՒՄԵԱՆԻ

մահվան տարեդարձի մասին: Այսօր, կիրակի, փետրվարի 14-ին, պատարագից յետոյ տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Զրկինեանց եկեղեցում (Գրիբոեդովսկայա փող.): Հոգեհանգստի սկիզբը ցերեկ. ժամը 12-ին:

182. 1—1

Նադեժդա Դաւթեան և Լևոն Աւագեան Ղուլեանները յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին՝ առաջինը իր եղբոր, իսկ երկրորդը իր քեռու՝

Գրիգոր Դաւթեան ՄԱՍՈՒՄԵԱՆԻ

մահվան տարեդարձի մասին: Այսօր, կիրակի, փետրվարի 14-ին, պատարագից յետոյ տեղի կունենայ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Զրկինեանց եկեղեցում (Գրիբոեդովսկայա փող.): Հոգեհանգստի սկիզբը ցերեկ. ժամը 12-ին:

183. 1—1

Ի տեղեկութիւն ծխողների!

«ԵՂԲ. ՍԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ» Առևտրական Տան ծխախոտի նոր գործարանը բաց է թողել հետևեալ բարձր տեսակի պապիրոսներ.

ПРИМА
25 հատը 30 կոպ.
25 հատը 25 կ. և 10 հատը 10 կոպ.
25 հատը 15 կ. և 10 հատը 6 կոպ.

Зефиръ և Деликатныя — 25 ՀԱՏԸ 15 ԿՈՊ. և 10 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.

Восходъ և Реформа—10 հատը 5 կոպ.

Араксъ—10 հատը 3 կոպ. Марсъ—20 հատը 5 կոպ.

Խնդրում ենք փորձել: Ծախվում է ամենուրեք:

ԾԽԱԽՈՏԻ ԳՈՐԾԱՐԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԱՆ
„ԵՂԲ. ՍԷՅԼԱՆԵԱՆՆԵՐ“

(Ե. Ճ. Կ.) (առ.) 155. 25—3

Adresse Télégraphique SANITAS
Адресъ телеграммъ САНИТАСЪ Тифлисъ

ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴԵՂԱՏԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ
ԱՌԵՒՏՐԻ
ԹԻՖԼԻՍ, ԲԱԳՈՒ, ԲԱԹՈՒՄ.

ԻՍԿԱԿԱՆ ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ
ՍԱՊՈՆ „ԿԻԼ“ Դ. Ն. ՆԷՕՖԻՏԻ

Պահանջեցէք կանաչ փաթեթի մէջ!

«ԿԻԼԸ»—մազերը թափվելու դէմ: «ԿԻԼԸ»—լաւ է գլխաւորապէս երեխաների համար: «ԿԻԼԸ» առաջարկվում է ծովային լողարանների համար: «ԿԻԼԸ»—կաշուի հիւանդութիւնների դէմ:

(առ.) 186. 1—1

ԼԷՕՆ
Գանօվսկայա փողոց № 7.
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՄԵԾ
ՊՈՐՏՐԵՏՆԵՐ
Մեծացվում են ամեն տեսակ պատկերներից:
ԳՆԵՐԸ ՇԱՏ ՄԱՏՉԵԼԻ ԵՆ

Գործը ցուցադրված է Դորօժնօվի մագազինի մօտ, անկիւնում, եւ արուեստանոցում՝ Կովկասկի Տօվարիշչեստվօյի շարքում, Գանօվսկայա փողոց № 7:

Պորտրէտները այնտեղ նեթ գցվում են շրջանակների մէջ:

Լուսանկարիչներից եւ սիրողներից ընդունվում է մեծ պօրտրէտների եւ նէգատիվների ռէտուշի գործ:

Նոյն արուեստանոցում տրվում են ռէտուշի դասեր երկու սեռի անձանց համար. պայմանների մասին դիմել՝ Тифлисъ, Гановская ул. № 7, Художественное Ателье „ЛЕОНЪ“
Леонъ Теръ-Григорянцу.

(Ն. Կ.) (առ.) 161 2—2

Թիֆլիսի Ժողովարան
Այսօր, կիրակի, փետրվարի 14-ին տեղի կունենայ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԵԿՈՅԹ

Սինեմատօգրաֆ Գինեպեճի.

Հիւրերը՝ անդամների առաջարկութեամբ՝ մուտքի համար վճարում են 50 կոպէկ: Սինեմատօգրաֆի սկիզբը երեկ. ժ. 9-ին:

(առ) 177. 1—1

ԲԺԻՇԿ
Գ. Յ. ՄԵԼՔՈՆԵԱՆ
Ներքին եւ վիրաբուժական (խիրուրգ.) հիւանդութիւններ.
Ընդունելութիւնը (առաւօտեան ժ. 11—1. (երեկոյեան ժ. 5—7.
Երևանեան հրապարակ—Պուշկինսկ. փ., № 1.
(Ե. Ճ. Կ.) (առ.) 1045. 100—60

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Աւագների Խորհուրդը յայտնում է ի տեղեկութիւն պ.պ. անդամների, որ երեքշաբթի, մարտի 2-ին, երեկոյեան ժամը 9-ին նշանակված է

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

քուէարկելու Ժողովարանի համար կանդիդատ առաջարկված անձերին:

առ. (14, 26, մ. 2.) 184. 3—1

ԱՐՏԻՍՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ
Երկուշաբթի, փետրվարի 15-ին
Տեղի կունենայ յոբելեանական ներկայացում

Ի ՊԱՏԻՒ
ՏԻԿԻՆ Վ. ՄԵԼԻՔԵԱՆԻ
25-ԱՄԵԱՅ ԲԵՄԱԿ. ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

Բարեհաճ մասնակցութեամբ տ. տ. Գաբունիա-Ցագարելիի, Տասօ Աբաշիձէի, Վարդուհու, պ. պ. բժ. Զարգարեանի, Կ. Մեսխիի և Գվարաձէի:

I

ՊԷՊՕ

Բ. գործողութիւն

Մասնակցում են.—տ. Մելիքեան, պ. պ. բժ. Ա. Զարգարեան, Մամիկոնեան, Միրզոյեան և Յարութիւնեան:

II

(Վրացերէն լեզուով)

ԱՐԴԻՒՆԱՒՈՐ ՊԱՇՏՕՆ

Դ. գործողութիւն

Մասնակցում են.—տ. տ. Մելիքեան, Գաբունիա-Ցագարելի, Տասօ Աբաշիձէ եւ պ. Գվարաձէ:

Րէժիսսոր՝ Կ. Մեսխի

III

Յոբելեանական հանդէս

IV

ՓԱՍՏԱԲԱՆԻ ՄՕՏ

Վօդ. 1 գործող.

Մասնակցում է ամբողջ խումբը:
ՏԵՂԵՐԻ ԳԻՆԸ ԲԱՐՁՐԱՑՎԱԾ Է
Սկիզբը երեկոյեան ժամը 8 ին
Րէժիսսոր՝ Օ. Մայսուրեան

Ուղերձների և շնորհաւորութիւնների համար մինչև փետրվարի 14-ը պիտի յայտնել բժ. Ա. Զարգարեանցին (Сергѣевская, д. Саркисова).

Օթեակների և պարտէրի տոմսակները մինչև կիրակի օրը կարելի է ստանալ պ. Քր. Տէր-Սարգսեանից (Саперная, № 35), իսկ այնուհետև կասսայից:

Յոբելեանական մասնաժողովի նախագահ՝ Ա. Զարգարեանց:

Անդամներ՝ տ. տ. Հ. Առստամեան, Վ. Աղամալեան, Ն. Գաբունիա-Ցագարելի, իշխ. Ն. Էրիստով, իշխ. Կ. Մակաեվ, պ. պ. Տ. Յովհաննիսեան, Մ. Զարար, Մ. Աթաբեկեան, Քր. Տէր-Սարգսեան և Ա. Յարութիւնեան:

ԱԶԴ.—Երկուշաբթի, փետրվարի 22-ին՝ «Օրլէանի կոյսը» Շիլլերի. հինգշաբթի, փետրվ. 25-ին հրաժեշտի ներկայացումներ—առաւօտեան՝ «Ուխտավորներ» Ահարոնեանի, երեկոյեան՝ «Մեծն Վարդան» Վ. Տիրացեանի:

(Ռ. Կ.) (առ.) 150. 4—3

ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Վերաբացվում է Հայոց Հրատարակչական Ընկերութիւնը:

Ողջունում ենք կուլտուրական այդ հիմնարկութեան նորից կեանքի կոչվելը և ցանկանում ենք, որ նրան իսկապէս աջողվի ուժեղ զարկ տալ հայ հրատարակչական գործին, որը ներկայումս գտնվում է անմխիթարական վիճակի մէջ:

Խօսելով նորերս մեր յօդուածներում ընթերցանութեան նիւթի չափազանց մեծ պակասի մասին, մենք առանձին ուշադրութիւն հրաւիրեցինք հրատարակչական գործի զարգացման վրա:

Արդարև, եթէ դուք ցանկանաք տեղեկանալ, թէ օր օրի վրա ինչ գրքեր են մտնում գրավաճառանոցները, դուք շատ շուտ կը համոզվէք, որ հասարակութեանը կարդալու համար շատ քիչ նիւթ է տրվում մեզանում:

Մի բոպէ ընդունենք, որ մանուկ հասակի ընթերցողների համար կան կարդալու նիւթեր մի որոշ չափով: Իսկ ինչ կարող ենք մենք առաջարկել հասակաւոր մանուկին, գիւղացի աւարտած պատանուն կարդալու: Ի՞նչ գրքեր կարող ենք մենք մատակարարել առհասարակ միջին ընթերցողին:

Մենք ընդգծեցինք, որ կարդալու նոր նիւթ շատ քիչ է աւելանում մեր շուկայում, և հայ ընթերցողի գրադարանը մնում է նախկինը, որը բաւական արդէն հնացել է և որի մէջ քիչ է ժամանակակից հետաքրքրութեան ծառայող գրական նիւթը:

Ահա հրատարակչական հաստատութիւնները կոչված են այդ խոշոր պակասը լրացնելու:

Եւ անշուշտ՝ ցանկալի է, որ վերաբացվող ընկերութիւնը կարող լինի խոշոր դեր կատարել այն գործում և իսկապէս բաւարարութիւն տայ զգացվող մեծ կարիքին:

Մենք վերև պայմանական կերպով ընդունեցինք, որ կարդալու նիւթ կայ մանուկ ընթերցողների համար: Ճիշդ է՝ կայ, բայց ամենևին առատ չէ այդ նիւթը, և մեր ամենամեծ պարտաւորութիւններից մէկը պէտք է լինի նաև մանկական ընթերցանութեան նիւթ մատակարարելը:

Եթէ գրագիտութիւն տարածելը համարվում է մի խոշոր կուլտուրական գործ, եթէ գրագիտութիւն տալով ժողովրդին մենք տալիս ենք նրա ձեռքը մի կարևոր կուլտուրական զէնք, ապա ուրեմն պէտք է ամեն ջանք գործ դնել այդ զէնքը իսկապէս կենդանի մի գործօն և ազդեցիկ մի միջոց դարձնելու:

Բաւական չէ տալ ժողովրդին գրագիտութիւն, այլ և պէտք է սովորեցնել նրան օգտվելու այդ գրագիտութիւնից իր մտաւոր պաշարի հարստութեան համար, պէտք է ընտելացնել նրան մշտական ընթերցանութեան:

Մինչև գիրքը մուտք չը գործէ ժողովրդական խաւերը, մենք զրկված կը լինենք կուլտուրական մի կարևոր զէնքի բարեփոխող և յեղաշրջիչ ազդեցութիւնից:

Խելացի կերպով առաջ տարվող հրատարակչական գործը լաւ կազմակերպված գրաբաշխութեան հետ միասին ունի կատարելու խոշոր դեր մեր կուլտուրական առաջադիմութեան ասպարէզում:

Եւ թող այն բոլոր անձերը, որոնց սրտին մօտ է հայ ժողովրդին խելացի ընթերցանութեան մշտական նիւթ մատակարարելու խնդիրը, հանդէս գան եռանդուն գործունէութեամբ:

Ա. Քալանթար

ԲՈՒԼԳԱՐԱԿԱՆ ԹԱԳԱՒՈՐԸ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ

Պետերբուրգ, 12 փետրվարի

Այսօր, կէսօրից յետոյ, 3 ժամ 20 րոպէին կայսրուհի Մարիա Ֆէօդորովնան այցելեց Կայսր Նիկոլայ I-ի որբերի ինստիտուտը, ներկայ էր դասերին, լսեց երգեցողութիւնը, դաշնամուրի վրա նուագումը և աշակերտուհիների դեկլամացիան: Եկեղեցում Նորին Մեծութեանը դիմաւորեց կրօնագիտութեան ուսուցիչը խաչով և աշակերտուհիների երգեցողութեամբ:

Բուլղարների թագուհին նախաճաշի էր հրաւիրված Սաքսէն Ալտէնբուրգեան դքսուհու մօտ: Բուլղարական թագաւորը այցելութիւններ փոխանակեց մինիստրների խորհրդի նախագահի, արտաքին գործերի մինիստրի, Պետական Խորհրդի նախագահի հետ, ապա այցելեց Մեծ Իշխանուհիներին և Իշխաններին:

Բուլղարական թագաւորին և թագուհուն ներկայացաւ դիպլոմատիական մարմինը 4 ժամ 30 րոպէին: Դեսպաններին ներկայացնում էր անգլիական դեսպանը որպէս աւագագոյնը: Երեկոյեան 7 ժամին ընտանեկան ճաշ կայացաւ Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնայի մօտ. ճաշին ներկայ էին բուլղարների թագաւորը և թագուհին: (Հ. Գ.)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պօլիս, 12 փետրվարի

Վախճանվեց հնագէտ Համդի-բէյ, օսմանեան հնութիւնների թանգարանի հիմնադիրը և դիրեկտորը:

Սահմանադրական խորհուրդը վերացրեց ռուսական սև-ծովեան նաւահանգիստներից եկած նաւերի քննութիւնը:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը հրամանագրեց զինուորական մարզութիւններ ուսուցանել բոլոր դպրոցներում: (Հ. Գ.)

—

Տրապիզոն, 12 փետրվարի

Երեք օրվայ ընթացքում շարժական ցուցահանդէսն եկան այցելելու շատ առևտրականներ, որոնք խիստ հետաքրքրվում էին ռուսական արդիւնաբերութեամբ: (Հ. Գ.)

—

Թէհրան, 12 փետրվարի

Կառավարութիւնը յանկարծ արգելված յայտարարեց անտառահատութիւնը և փայտ արտահանելը Գիլանից և Մազանդարանից, անտես առնելով օտարազգիների պայմանագրերը: Միսսիաները բողոք յայտնեցին: Տեղի վրա ուղարկված Ահմեդ-խան Հէյդարին, առաջին մէջլիսի գործիչը, դատ սկսեց Կուսխի դէմ, մեղադրելով ֆիրման, որ նա ի չարն է գործ դնում երեք տարի առաջ վերջացած կօնցէսիան: (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 12 փետրվարի

Եփրեմի հետ միասին ժամանեցին բախտիարցիների զօրաբաժնով սարդար Բահատուրը և պարսիկ կօզակների մի հարիւրեակ: Ընդամենը Ղարադաղից եկան մօտ 600 կառավարչական զօրքեր չորս ռմբաձիգներով, երկու լեռնային թնդանօթներով և Կրէզօյի երկու դաշտային թնդանօթով: Արտիլերիայի հրամանատարն է պաշտօնաթող գերմանական ունտէր-օֆիցէր Հաշէ: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկվա, 12 փետրվարի

Առաւօտեան 10 ժամ և մէկ քառորդին ֆրանսիական պարլամենտականները ճանապարհ ընկան արտասահման: Հիւրերին ճանապարհ դնելու համար կայարանում հաւաքվեցին քաղաքագլուխը, Պետական Դումայի անդամներ Մակլակօվ և Մակսուտօվ, ֆրանսիական կօլօնիայի ներկայացուցիչները և բազմաթիւ հասարակութիւն: Դէպուտատները շնորհակալութիւն յայտնեց մոսկվացիներին սիրալիր ընդունելութեան համար: (Հ. Գ.)

—

Հելսինգֆորս, 12 փետրվարի

Սենատը մերժեց գործադուլների միջնորդութիւնը 10,000 մարկ նպաստ տալու մասին: Նահանգապետի առաջարկութեամբ սենատը վճռել է տալ 250 երկաթուղային տոմսակներ և 2000 մարկ՝ գործադուլներին քաղաքից գաղթեցնելու համար: (Հ. Գ.)

—

Բագու, 12 փետր.

Ջէյվադի գաւառում սահմանապահների և կոնտրաբանդիստների միջև տեղի ունեցաւ հրացանաձգութիւն: Սպանվեց մի կոնտրաբանդիստ: (Հ. Գ.)

—

Պարիզ, 12 փետրվարի

Գվադելուպայից հաղորդում են, որ դրութիւնը կղզու վրա լուրջ է: Կատարվում են վանդալական գործողութիւններ. վիրաւորված գործադուլաւորները սպանվեցին հրդեհված շաքարեայ պլանտացիաներում: Գիւղական բանուորները գնում են Սէն-Ֆրանսուա և Պուէնտապետի՝ վրէժ լուծելու նպատակով երեք սպանված գործադուլաւորների համար ժանդարմների հետ ընդհարում ունեցած ժամանակ: Կառավարութիւնն ուղարկում է զօրաբաժին և ունտէր-օֆիցէր:

Վրէժխնդրութիւնից իր վաշտի կերակրի կաթսայի մէջ կրաբորակ գցողը դատապարտված է 20 տարվայ տաժանակիր աշխատանքների: (Հ. Գ.)

—

Բուդապեշտ 12 փետրվարի

Ընտրողների ժողովում Իւստ յայտնեց, որ սահմանադրական ստատուս մացնելով Բօսնիայում և Հերցեգովինայում՝ կատարվել է ունգարական սահմանադրութեան մի անօրինակ խախտում. կուսակցութիւնը կը պահանջէ դատի ենթարկել կառավարութեանը։ (Հ. Գ.)

—

Սօֆիա, 12 փետրվարի

Բօլգարական գործակալութիւնը հաղորդում է. «Սահմանագծային ինցիդէնտի մասին քննութիւն կատարող 20-րդ գնդի հրամանատարը ծանուցանում է, որ արտիլէրիան ոչ մի մասնակցութիւն չէր ընդունում, հրացանաձգութիւնը դադարեց։ Վիճելի է մնում մի շաւիղ, որից օգտվում էին բօլգարները։ Կառավարութիւնը Կ. Պօլսում քայլեր արեց status quo-ն վերականգնելու համար»։ (Հ. Գ.)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ

—

Լօնդօն, 12 փետրվարի

Րէյտէրի գործակալութիւնը հաղորդում է, որ այսօր երկու անգամ գումարվեց մինիստրների խորհուրդը։ Ըստ երևոյթին, դրութիւնը յանկարծ կրիտիքական ընթացք ստացաւ։ Համայնքների ժողովի կուլուարներում յոռետես տրամադրութիւն է։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 12 փետրվարի

Համայնքների ժողով։ Պատասխան ուղերձին վերաբերեալ ուղղումն, որ պահանջում է աշխատանքների հովանաւորումն տան մէջ, մերժվեց 285-ի մեծամասնութեամբ 185-ի դէմ։ Ուղերձը միաձայն ընդունվեց։ Համայնքների ժողովի նիստերը յետաձգվեցին մինչև փետրվարի 15-ը։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 12 փետրվարի

Համայնքների ժողով։ Քննվում է պատասխան ուղերձը գահական ճառին։ Երկու օրվայ վիճաբանութիւններից յետոյ 285 ձայնի մեծամասնութեամբ 254-ի դէմ մերժվեց Չէմբէրլէնի ուղղումն, որով պահանջում էր սակագնային րէֆօրմը։ Նացիօնալիստները ձեռնպահ մնացին ձայնատուութիւնից. բանուորական կուսակցութիւնը ձայն տուեց կառավարութեան օգտին։ (Հ. Գ.)

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՏԻԲԷԹ

—

Պէկին, 12 փետրվարի

Բօգդիխանի հրովարտակով պաշտօնանկ է արված դալայ-լաման և զրկված է հոգևոր արտօնութիւններից։ Նրան մեղադրում են, որ նա հեռացաւ Լհասից տեղական չինական բերդապահ զօրքը ուժեղացնելուց յետոյ։ Նշանակված է նրա յաջորդի ընտրութիւնը։ (Հ. Գ.)

—

Լօնդօն, 12 փետրվարի

Լօրդերի ժողով։ Հնդկական գործերի պետական քարտուղար Մօրլէյի խօսքով, որը բացատրեց Տիբէթում տեղի ունեցած դէպքերը և դալայ-լամայի փախուստը, վերջինս գնում է Հնդկաստան և խնդրում է բրիտանական կառավարութեան հովանաւորութիւնը։ Լհասի ազգաբնակութիւնը չինական հետևակ զօրքի իշխանութեան ներքոյ է։ Դալայ-լաման հրաւիրված է ապրելու Կալկաթայում։ «Կառավարութիւնը,—ասում է Մօրլէյ,—խիստ չէզոքութիւն կը պահպանէ։ Տեղի ունի կարծիքների փոխանակութիւն Չինաստանի կառավարութեան հետ անսպասելի կերպով ստեղծված դրութեան առիթով։ Դալայ-լամայի փախուստի պատճառը անյայտ է»։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

—

Կ. Պօլիս, 3 փետրվար

Ուլնիոյ*) հարց մը, երկուք և կէս ամիսէ ի վեր, հրապարակի վրայ է և կը ծեծուի թերթերու և պաշտօնական շրջանակներու մէջ, միշտ փոխելով գոյն և ձև։

Տասը-տասներկու զէյթունցի, որոնք ժամանակին չուզեցին Մարաշի պատերազմական ատեանին անձնատուր ըլլալ, անոր խիստ հրամաններուն հակառակ, աւելի նախապատիւ համարեցին իրենց սիրական լեռներուն ապաւինիլ քան թէ երթալ փորձել այն արդարադատութիւնը որ, կողմնակի ըմբռնումով, հայ արիւններու վրայ ուզեց բարձրացնել հայ կախաղաններ։ Զէյթունցին, գէթ տիրող հոգեբանութեան առջև, աւելի ախորժելի զոհ պիտի ըլլար իսլամական մոլեռանդութեան, որ կարծեց աստուածահաճոյ ողջակէզներ մատուցած ըլլալ անպարտ արիւններով։

Այդ տասներկու փախստականները, իրենց ետևէն, ունեցան քանի մը տասներկուքներ, լեռներու կուրծքին տակ, և ահա փոթորկալից հարց մը ազգին, որ կատարուած դէպքերու, վրայ հասած աղէտներու, կրակի ու արիւնի մէջ, քարացած մնաց։ Մարաշի զինուորական ատեանը խստեր պահանջներ դրաւ, իրեն պատիւի հարց ընելով այդ զէյթունցիները ձանկին ներքև դնելու։ Փախստականները վճռեցին իյնալ զէնքը ձեռքերնին։ Նոր աղէտներ, նոր փոթորկի սև նշաններ գուշակուեցան։ Բանակցութիւնները, բարեբաղդաբար, կիրքերը մեղմեցին երկուստեք։

Նոյեմբեր 10-ին լեռնականները վար կիջնեն օր մը Ուլնիա, ուր կարօտ մնացած էին օրերով. զիրենք հիւրընկալող երիտասարդի մը տանը մէջ կընեն այն քէֆը, որ յատուկ է մահը ձեռքին մէջ և կեանքը սուրին և գնդակին վրայ դնող լեռնականին։ Տեղական ոստիկանութիւնը հոտ կառնէ, զինուորներու խումբ մը դիրք կը բռնէ քիչ հեռուն. գնդակ մը կուգայ դէպի մեր տղաքը։ Ասդիէն ձեռքէ մը պատասխանը կը թռչի բոցալէս, իրարանցումը կը սկսի, ուրիշներ վրայ կը հասնին, և խումբը կը քաշուի իր լեռները։

Զինուորական հալածանքը կրնար մեծ շփոթութիւններ առաջ բերել, եթէ, իր առաջին թափովը, շարունակուէր ցուրտին և ձիւնի օրերուն։ Փախստականները, առ հարկի, պիտի իջնէին գիւղերը՝ իրենց ուտելիք հայթայթելու և նեղ պարագային՝ անշուշտ տեղի կրնային ունենալ չնախատեսուած անախորժութիւններ։ Ասդին Ուլնիան, ճնշուած բարոյապէս և նիւթապէս, աւելի բաղձացող ըլլալով արդեամբք ցոյց տալու թէ ինքը ալ աւելի սահմանադրական է, չուզեց շփոթութեանց առիթներ ստեղծել։ Եւ վերջապէս, Հիլմի փաշայի օրով, միջին ճամբայ մը գտնուեցաւ մեղմացնելու հետզհետէ զինուորական հալածանքը, և այդպէս՝ լեռնականները դիւրութիւն գտան դառնալ իրենց տուներն ու տեղերը։

Մարաշի զինուորական ատեանը, ինչպէս կանխաւ, ալ աւելի սրեց իր ուշադրութիւնը Ուլնիոյ փոխ-առաջնորդի՝ Վաղարշակ վարդապետի վրայ. քանիցս խիստ հրամաններ հանեց՝ զայն հեռացնելու։ Բայց ինչպէս կերևի, Ուլնիա փափագեցաւ, որ իր վարդապետը չհեռացուի իրմէն։ Ու վերջապէս, քանի մը օր առաջ, հեռագիրը լուր բերաւ, որ Մարաշ տարուած է Վաղարշակ վարդապետը։

Ազգ. վարչութիւնը խնդրոյն դիմում ըրաւ գործադիր իշխանութեան և խնդրեց, որ նոր շփոթութեանց տեղիք չտրուի, Ուլնիոյ վարդապետը դարձուի իր ժողովուրդին քով։ Պէտք է ըսել, թէ ներքին գործերու մինիստրը ատկէ առաջ հրահանգ տուած էր արդէն չխռովել Ուլնիոյ խաղաղութիւնը և թոյլ տալ, որ ան իր տեղը նստի։ Վարդապետի մասին եկած վերջին լուրը բոլորովին յանկարծական եղաւ։ Պատրիարքը, իր առաջին այցելութեան օրը, խօսած է Վաղարշակ վարդապետի նոր հարցի մասին։ Արդարադատութեան մինիստրը հաւատացուցած է նորէն սրբազնութեանը, թէ կառավարութիւնը, այսուհետև, երբեք չպիտի միջամտէ հոգևորականներու հարցին՝ առանց պատրիարքարանի կանխական գիտութեանը։ Յոյս կայ, որ Վաղարշակ վարդապետին հարցը շուտով վերջ կը գտնէ։

Վաղարշակ վ. թէև բնիկ ուլնիացի չէ, բայց, ինչպէս կերևի, իր կոչումովը խիստ համապատասխան է Կիլիկիոյ հիւսիսականներու բնաւորութեանը. գէթ համառօտակի կարելի է ըսել, թէ իր սրտին մէջ ունեցած ըլլալու է բաւական ջերմութիւն իր սիրելի հօտին կեանքին ու պատիւին համար։ Կառավարութեան տեսակէտով իսկ աւելի լաւ է Ուլնիոյ մէջ թողուլ խելքը գլուխը հոգևորական մը, ինչպէս է Վաղարշակը, սիրելի, որուն խօսքը դիւրաւ լսելի ըլլայ ժողովուրդին։ Անգլուխ լեռնականութիւն մը, գուցէ, փորձուէր նետուիլ կիլիկեան փոթորիկի մէջ, և այսօր ուրիշ նոր ամօթ մը և նախատինք մըն ալ աւելցուած ըլլար հայրենիքին։

Մինչ ասդին, վարդապետի մը համակրանքով կը թրթռան մեր սիրտերը, Ուլնիոյ բարձունքներուն տակ, անդին Սիօնի վրայ, ս. Յակոբայ վանքի միաբանութիւն մը, երեք սրիկայ վարդապետներու պաշտպանութեանը համար, տխրութեամբ կը համակէ ամենքս ալ։

Տարիներով ազգին դէմ ըմբոստացաւ, զինուեցաւ մարդկային ամենացած մեքենայութիւններով, վանքին հարստութիւնը գործածեց իրեն պաշտպաններ, հաւատարիմներ, կաշառակուրծ ուժեր հայթայթելու։ Ու վերջերս ալ, Պոլիսէն ղրկուած տեղապահին ու աշխարհական պատուիրակներուն դէմ կռիւ հրատարակեց՝ ոգի ի բռին մարտնչելու վանքին պարիսպներուն կռթնած։

Վանքը, ազգին դիմումին վրայ, որ դժբաղդաբար վերջին միջոցը եղաւ, որովհետև ալ ոչ մէկ ձայն կարելի եղաւ լսելի ընել տալ վանքին, պաշարուեցաւ զինուորներէ, պայմանաժամ տրուեցաւ, որ երեք սրիկաները դուրս նետուին վանքէն։ Միաբանութիւնը, որ մինչև այդ բոպէն կրցած էր դէպքերը իր ուզած եղանակովը վարել, ըմբռնեց թէ լուրջ էր շարժումը իրեն դէմ, իսկոյն զինաթափ եղաւ և ստիպեց, որ դուրս ելլեն այն երեքը։ Տեղապահը ներս մտած է, և հեռագիրները լուր կը բերեն, թէ լաւ ընդունելութիւն եղած է։

Հաւանական կը կարծուի, որ տեղին վրայ կատարուած քննութիւնները նոր յայտնութիւններ բերեն այն մեքենայութեանց մասին, որոնք տարիներով զբաղեցուցին ազգը։ Շատ ցաւալի կըլլայ, եթէ գործին մէջ խառնուած տեսնուին այնպիսի ձեռքեր, որոնք ազգասիրութեան ներքև ապաստանած՝ յանուն ազգասիրութեան կռիւներու նիւթ հայթայթած են տարիներով։

Կըսուի թէ վերջին օրերս շատ թանկագին կորուստներ եղած են միաբանութեան ձեռքով. գլխաւորաբար կը յիշուի գորգ մը, որ 800 ոսկիի արժէքով գնահատուած է եղեր։

Կառավարութիւնը ամեն օժանդակութիւն խոստացած է ազգին, որով և տեղապահին. յոյս կայ, որ ալ վերջ կը գտնեն ասդիմական վէճերը։

Շահէն

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 1 փետրվարի

Ձմեռվայ պատճառով գուցէ, տիրում է բաւականաչափ խաղաղութիւն, ալան-թալաններ չեն լինում, ու երկրի խաղաղ ազգաբնակութիւնը լայն շունչ է առնում, եթէ հաշուի չը դնենք Ախուրիկ և Սալախանէ հայ գիւղերում քիւրդ Հիւսէյին բէյի և Հասան աղայի երկրի հանդարտ տարրերին հասցրած անհանգստութիւնները, որոնց մասին գրել էի նախորդ թղթակցութիւնովս։

Անհանդարտ տարրերը, ինչպէս գիտէք, աշունից ի վեր երկրից գաղթել ու հաւաքվել են Պարսկաստանում, որտեղից սպառնում են երկրի խաղաղութեանը, ինչպէս նաև ուժեղացնում են պարսկական միապետական կարգերը։ Առաջիկայ գարնան համար նախագուշակվում են փոթորիկներ և մութ ույժերի շարժումներ դէպի այս կողմը, որովհետև յուսալի չէ, որ քիւրդ ցեղապետները, որոնք ահագին հարստութեան և ազդեցութիւնների տէր էին դառել Թիւրքիայում, դիւրին կերպով հրաժարվեն նրանցից։

Ձմեռն էլ ոչ նուազ նպաստում է ներկայ երևոյթական հանդարտութեանը, կատարելով ոստիկանական հսկողութիւն։ Պատմում են, որ սրանից տարիներ առաջ մի ժամանակ ալան-թալաններ, սպանութիւններ լինելիս՝ ազգաբնակութիւնը դիմում է ժամանակի վալիին և գանգատվում է, իսկ վալին անտարբերութեամբ պատասխանում է. «Շատ լաւ, զաւակներս, մի քիչ համբերութիւն ունեցէք. ձմեռը հասնում է, և շուտով ձիւնը կը փակէ ճանապարհները և էլ չեն լինի յափշտակութիւններ, որոնց համար դուք գանգատվում էք»։ Ահա մի երկիր, ուր կառավարութեան պաշտօնը բնութիւնն է կատարում։

Մի ուրիշ անգամ էլ դաշտում աշխատող եզները յափշտակում, տանում են և հերկող գութանները մնում են առանց լծկի. էլի գանգատվում են ժամանակի կառավարչին, որ սառնասրտութեամբ պատասխանում է. «Յանցանքը ձերն է և ոչ գողերինը. ախր դուք ինչու եզները տներում չէք պահում, դաշտն էք հանում»։ Ճշմարիտ, որ սա փոքր յանցանք չէ, և մենք այսպիսի կառավարիչներ քիչ չենք ունեցել։

Հայերի զինուորական քննութիւնները լինում են դանդաղ. կարծեմ թէ թիւրք կառավարութիւնը զղջացել է քրիստոնեաներից զինուոր առնելու. թէև հայերն էլ, որոնք առաջ այնչափ խանդավառութիւն էին ցոյց տալիս և զինուոր տալ պահանջում՝ այժմ ուզում են զանազան միջոցներով խուսափել այդ ծառայութիւնից։ Երբ Եւրոպական Թիւրքիայի սահմանագլուխների վրա խնդիրները բարդվում են և շշուկներ են լսվում բօլգար կամ յոյն ընդհարումների, չենք իմանում թէ մօտենալը որչափ յարմար է քրիստոնեաներից զօրք հաւաքելը. գուցէ և այդ լինի թիւրք կառավարութեան ներկայ երկդիմութեան և տատամսոտ վարմունքի պատճառը։

Վանի նահանգի հիւսիս-արևելակողմը գտնվում է Սալախանէ անուն մի գիւղ, որը սեփականութիւնն է Վարագի վանքի և սակայն տասնեակ տարիներից վեր գրաւել է Շամսկլի աշիրէթի ցեղապետներից Հասան աղան, որը միևնոյն ժամանակ սաստիկ վնասներ էր հասցնում այնտեղ բնակվող 30 տուն հայ բնակիչներին, և միշտ անպակաս էին լինում նրանց ու Հասանի միջև անբաւականութիւններ և բողոքներ։ Վարագը քսան տարիներից ի վեր դատավարութիւն է ունեցել յիշեալ քիւրդի դէմ և միշտ էլ շահել է դատը. այնուամենայնիւ չէ կարողացել տէր լինել իր իրաւունքներին, որովհետև համիդեան ռէժիմը հովանաւորում էր բռնաբարութիւններն ու թալանները։

Սահմանադրութիւնից յետոյ վանքի հոգաբարձութիւնը կրկին ձեռք առաւ խնդիրը և ուզեց յիշեալ ագարակը յետ խլել քիւրդից և այն տեղում երկրագործական և գիւղատն. գործունէութիւն սկսել, բայց այդ մինչև օրս էլ չաջողվեց. իսկ այժմ էլ քիւրդի կողմից կուսակալի միջոցով առաջարկ է լինում 500 օսմ. ոսկու փոխարէն ձեռնթափ լինել վանքի սեփականութեան իրաւունքից և գիւղը թողնել Հասան աղային։

Հոգաբարձութիւնն անձեռնհաս համարելով իրան, խնդիրը տեղեկագրել է ազգ. պատրիարքարանին և հրահանգ ուզել։ Չենք կարծում, որ քիւրդի առաջարկն ընդունվի, որպիսի դէպքում Սալախանէի բնակիչ 30 տուն հայերին անկարելի կը լինի այնտեղ բնակվել։ Իսկ գիւղը միայն մի տարվայ մէջ մի քանի 500-ներ կարող է տալ վանքին, եթէ այն տեղում տիրէ խաղաղ, նորմալ կեանք և կուլտուրական գործունէութիւն։

Առաջարկում ենք պատրիարքարանին մերժել այդ առաջարկը։

Մարակ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Նոր-Բայազէտ, 8 փետրվարի

Փետրվարի 2-ին կայացաւ մեր քաղաքի մեշչանական հասարակական ընդհանուր ժողովը, որ բաղկացած էր մօտ 500—600 հոգուց, մի թիւ, որ ոչ մի անգամ չէր եկած մեր ժողովներին, այնպէս որ դումայի դահլիճում տեղ չը լինելու պատճառով՝ ժողովը կայացաւ բացօդեայ։

Այս տարի մեշչ. ժողովը շատ հետաքրքրական էր այն տեսակէտից, որ ժողովուրդը չէր ցանկանում ըստ սովորութեան ծախել իր արօտները տեղական անասնավաճառներին, չօբարներին, որոնց շնորհիւ նա՝ ժողովուրդը զրկվեց անցեալ տարվայ խոտի արդիւնքի մի խոշոր մասից։ Եւ այդ պատճառով քաղ. հասարակութեան մեծամասնութիւնը, գլխաւորապէս հողագործ դասակարգը, լարված ուշադրութեամբ լցրել էր ժողովի տեղը՝ իր հողագործական պայմանների և արօտների մասին որոշ կարգադրութիւններ անելու։ Բայց պէտք է ասել, որ թէ արօտները ծախելու դէմ և թէ այլ հողային և այլ տնտեսական հարցերի մասին ժողովրդի մէջ պրօպագանդա էր մղել և հետաքրքրութիւն ներշնչել Արամ Մարէյեանը, որը հող. դասակարգի շահերի և հասարակական տնտեսական տեսակէտից ժողովրդին ոտքի էր հանել և իր սեփական իրաւունքների պաշտպան կանգնեցրել։

Ժողովը շատ աղմկելուց յետոյ ընտրեց 15 հոգուց բաղկացած մի մասնաժողով, ի թիւս որոց և յիշեալ Ա. Մարէյեանցին, որին և իրաւունք տուեց չը ծախել արօտները չօբարներին, որոնք թէև մի 2000 ր. փող են տալիս իբրև արօտագին, բայց 20,000 ր. աւելի վնաս են հասցնում ժողովրդին։ Միւս կողմից՝ արօտները ժողովրդի տրամադրութեան տակ թողնելը, ինչպէս բացատրում են գործին մօտ մարդիկ, ունի նաև այն առաւելութիւնը, որ հասարակութեան անասունները—ոչխար, տաւար և այլն—դուրս գալով հանդերից դէպի սարահարթը՝ արօտամարգերը, ցանքերը և խոզանները ազատ կը մնան անասունների արածելուց, հետևապէս իրանց լիակատար արդիւնքը կը տան։ Ապա թէ ոչ՝ սարահարթերի արօտները ծախելով մասնաւոր անասնավաճառներին, քաղաքի բոլոր անասնապահները լցնում են դաշտերը և արտերի միջանցքները և անխնայաբար կերցնում են թէ ցանքերը, թէ խոզանները և թէ այլ և այլ արգելված մասերը…

Յիրաւի, ժողովրդի ձեռքում պահված արօտները գուցէ այն կապալագինը չը տան

ՖԷԼԻԷՏՕՆ

ՀՈԳԵՒՈՐ ԱՇԽԱՐՀԻՑ

—

Գիտեմ, ընկերներիցս շատերը կը հայհոյեն ինձ, որ գրում եմ հոգեւոր աշխարհից։

— Թող մեռեալները թաղեն իրանց մեռելները,—կասեն ինձ,—իսկ դու փախիր։

Թաղելը թող թաղեն, բայց թաղման հանդէսին ներկայ լինելը մեզ չէ խանգարում։

Ուրեմն, ճն անդր առաջ, դէպի թաղում։

—

Նախ ներկայ լինենք Էջմիածնի հոգևոր ճեմարանի թաղման հանդիսին, որի նկարագիրը տալիս է նոյն ճեմարանի տեսչի պաշտօնակատար Մ. Ռոստոմեանը՝ տեղական թերթերում գրած իր «հերքման» մէջ։

Բայց նախ և առաջ մի երկու հարց տանք։

Առաջին հարց.

— Ինչու ճեմարանում մինչև օրս տեսուչ չը կայ, այլ կայ միայն տեսչի պաշտօնակատար. թէ տեսուչ կայ, բայց նա ուրիշ անուան ու ազգանուան տակ է թագնված այնտեղ։ Եւ եթէ կայ՝ ով է նա, իսկ եթէ չը կայ՝ ինչու չը կայ նա։

Խնդրում եմ, որ այս հարցիս պատասխանէ ոչ թէ տեսչի պաշտօնակատարը, այլ մի մարդ, որը իրաւունք ունի պատասխանելու, որովհետև վախենում եմ, որ տեսչի պաշտօնակատարը տայ մեզ ճիշդ այնպիսի անգրագէտ պատասխան և անէ այնպիսի յայտնութիւններ, որպիսին տուել է փետրվարի 6-ին իր հերքման մէջ։

Իսկ այդ հերքումը։

Այդ հերքումը այնքան բնորոշ է, այնքան նոր բաներ է բացում ամբողջ հայ աշխարհի առաջ, որ քիչ է մնում հերքում գրողին ասես՝

— Պարոն պաշտօնակատար, բաւական է. «ձէ»-իդ պոչը կարճ արա, որովհետև դու այսպէս թէ այնպէս պաշտօնակատար անձն ես։

Բայց համբերութիւն ունենանք կարդալու այդ յայտնութիւնները։

«Վարչութիւնս,—պատմում է տեսչի պաշտօնակատարը,—հոկտեմբերի 30-ին ստացել է կօնդակ, որը վերաբերում է ամեն առաւօտ և երեկոյ Մայր Տաճարը չորս սան ուղարկելու իբրև փոխասացներ և մոմակալներ»։

Ակաս, պակաս—էդ էր պակաս։

Ի՞նչպէս թէ կօնդակ. ուրեմն Ամենայն Հայոց Կաթողիկոսը որպէսզի ճեմարանից 4 փոխասաց և մոմակալ տղաներ ստանայ՝ դրա համար կօնդակ է ուղարկում տեսչին։ Այո՞։

Մի՞թէ բաւական չէր, որ նա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կանչէր ձեզ և ասէր.

— Տղաս, վաղվանից 4 սան ուղարկիր մոմ պահելու և փոխ ասելու։

Թէ՝ գուցէ նա այդպէս էլ արել է, իսկ նրան ասել էք.

— Փոխասացը՝ փոխասաց, բայց, Վեհափառ Տէր, կօնդակ ուղարկիր մեզ. առանց կօնդակի մենք տաճարում մոմ պահողներ տալ չենք կարող։

Չը գիտեմ, ոչինչ չեմ հասկանում. դա ինչ վիճակ է տիրում ճեմարանում, որ կօնդակներ գրելու դրութիւն է ստեղծվել էջմիածնում նոյնիսկ… 4 փոխասացների համար։

Եւ այսպէս, երևի, մենք շուտով կը լսենք և կը կարդանք, որ «Վեհափառը ճեմարանի այս-ինչ ուսուցչին իր մօտ կանչելու համար կօնդակ գրեց նրան». կամ՝ «Թումանչի Յակոբը կօնդակ ստացաւ, որ գնայ հաւերին վանքի բակից դուրս քշի». կամ՝ «համաձայն Վեհափառի սրբատառ կօնդակի՝ Թադէոս վարդապետը մտաւ Կիրակոս եպիսկոպոսի խուցը, տեսնելու որ սա կիսամերկ ժամ չը գայ վանքի բակում»։

Ահա թէ ինչ յայտնութիւններ է անում ճեմարանի տեսչի պաշտօնակատարը ճեմարանի և կօնդակների մասին։

Բայց անցնենք առաջ։

Նոյն այդ հերքման մէջ և այդ տողերից յետոյ պաշտօնակատարը ապլոմբով ասում է.

«Այս հրամանը անշեղ կատարվում է մինչև այսօր»։

Խորին շնորհակալութիւն պարոն պաշտօնակատարին. молодецъ! Որքան կամք, որքան հպատակութեան զգացմունք, որպիսի՜ կարգապահութիւն է տիրում հոգևոր ճեմարանում, որ մինչև այսօր այդ հրամանը անշեղ կատարվում է….

Այդ նոյն հերքումից մենք իմանում ենք մի ուրիշ նորութիւն էլ. այդ այն է, որ «հայր Կոմիտաս վարդապետը իբրև վանքի միաբան, այլ ոչ իբրև ճեմարանի ուսուցիչ, ստացել է Վեհափառից հրաման (գուցէ կօնդակո՞վ) կազմակերպել սաներից (ինչ ոճ) Մայր Տաճարի համար քառաձայն խումբ և այլն և այլն»։

Ի՞նչպէս թէ «հայր Կոմիտասը իբրև ոչ ճեմարանի ուսուցիչ»։

Ուրեմն հայր Կոմիտասը՝ մեր այն նշանաւոր և ամենահեղինակաւոր երաժշտագէտը, որ վանքի հաշւով գնացել է արտասահման, երկար տարիներ կատարելագործվել է և երաժիշտ դարձել, այլ ևս ճեմարանում ուսուցիչ չէ՞։ Ապա ի՞նչ է անում նա. թէ՞ չնաբուծութեամբ է պարապում թէ՞ բաժակից թել է մանում նարօտների համար։ Եւ եթէ նա չէ ճեմարանի երաժշտութեան և երգի ուսուցիչը, ո՞վ է նրա տեղ. Բարթուղիմէոս եպիսկոպո՞սը թէ՞ Թուանչի Զաքարը։

Թէ՞ գուցէ հայր Կոմիտասը խումբ պատրաստելու համար 1500 ր. է ուզել և նրան մերժել են և ասել՝ «չենք կարող, դու գնա և թել մանիր»։

Այս բոլորը շատ աւելի հետաքրքրական հարցեր են, քան «Սուրհանդակի» առաջնորդողը, որը հերքելու դուրս է եկել տեսչի պաշտօնակատարը։ Բայց առա՛ջ գնանք։

Նոյն պաշտօնակատարը գրում է. «Երգիչների քանակը ներկայումս այնքան պակասաւոր է (ինչ ոճ) և ձայն ունեցողների թիւը այնքան քիչ, որ մի երկուսի բացակայութեան շնորհիւ երկու անգամ խումբը քառաձայնի տեղ երգել է միաձայն»։ Այդ «չարիքի» առաջն առնելը դժուարին է և այլն»,—բացատրում է Ռոստոմեանը։ Ուշք դարձրէք չարիք բառի չակերտների վրայ։

Ուրեմն, տեսչի պաշտօնակատարի կարծիքով, եթէ այսօր Մայր Տաճարում քառաձայն երգեցողութիւն չը կայ (և գուցէ ընդհանրապէս ոչ մի երգեցողութիւն չը կայ), դա գուցէ և մի բարիք է. եթէ ոչ՝ ինչի՞ համար է հեգնում հոգևոր ճեմարանի տեսչի պաշտօնակատարը չարիք բառը և չակերտների մէջ առնում նրան։

Այո, պարոն պաշտօնակատար, երբ էջմիածնում կայ Կոմիտաս վարդապետի նման մի հռչակ երաժշտագէտ և այնտեղ քառաձայն երգեցողութիւն չը կայ, դա անչափ չարիք է, և այն՝ առանց հեգնանքի. աւելի վատ՝ դա ցինիկութիւն է, որովհետև եթէ հայ մարդը, հաւատացեալը, օտարը գալիս է էջմիածին, հաւատացած եղէք, ոչ թէ նրա համար, որ հիանայ էջմիածնի «միաբանութեամբ» ու ճեմարանի վարչութեան անդամների գեղեցիկ աչքերով, այլ որպէսզի նա գոնէ տաճարում լսի սիրուն երաժշտութիւն, երգեցողութիւն, որը էջմիածնի վրա գոնէ նստում է տարեկան 60,000 րուբլի։

Գոնէ երաժշտութիւն… Երգ… հասկանում էք։

Գէորգի և Մակարի օրերով՝ ուրիշ բան չը գիտեմ, բայց այդ կար, և մենք մտնում էինք տաճար, լսում էինք մեր սիրուն, նազելի, խորհրդաւոր երաժշտութիւնը՝ երգը ու գոհ սրտով դուրս էինք գալիս այնտեղից։

Եւ որովհետև դուք, պ. Ռոստոմեան, այսօր հերքում էք, որ ոչ ոք էջմիածնում «Վեհափառի մօտ չարախօսութիւններով չէ զբաղվում», ահա ես ասում եմ, որ ձեր այդ հերքումով դուք ամենամեծ չարախօսողն էք Վեհափառի և էջմիածնի մասին քաղաքին, ինչ որ անասնապահ չօդարներն են վճարում, բայց և այնպէս ժողովուրդը կօգտուի մեծապէս իր ցանքերից և խոտատեղերից տասնապատիկ գումարով: Մնում է, որ մեր նորընտիր մասնաժողովի անդամները գործին վերաբերուեն շիտակ, անկողմնապահ կերպով և ի նկատի ունենալով ժողովրդի շահերը՝ ոչ մի դժուարութեան առաջ չը կանգնեն:

---

*) Չէյթուն։

Յիշենք և այն, որ նոյն այդ մասնաժողովի անդամներին լիազօրուեց նաև հարկերի և այլ հասարակական տուրքերի բաժանագրումը, քաղատեղերի, արօտամարգերի և ցանքերի համար ղօրուղչի վարձելը, մեշչանական հասարակութեան 1909 թ. հաշուեմատութիւնը և այլ հասարակական խնդիրների ու հարցերի լուծումը:

Գ. Սինանեան

«ՋԷՋԻԼԻԻ» ՔՍԱՆԱՄԵԱԿԸ

Այսօր վրաց Թատրոնում, վրաց մանկական հանդէս «Ջէջիլի» խմբագրութիւնը տօնում է այդ հանդէսի գոյութեան 20-ամեակը:

Յայտնի է, որ այդ համակրելի ամսաթերթի հիմնադիրն է Անաստասիա Ծերեթելի-Թումանովան, վրաց յայտնի հրապարակախօս հանգուցեալ Գիօրգի Ծերեթելիի ամուսինը և հրապարակախօս Գ. Թումանեանի քոյրը:

«Ջէջիլի» մանկական հանդէսը 20 երկար ու ձիգ տարիների ընթացքում, առանց դաւաճանելու իր կոչմանը, ծառայել է վրացի մանուկների դաստիարակութեան և կրթութեան վեհ գործին:

Եւ երբ մենք աչքի առաջ բերենք այն աննպաստ պայմաններն ու առասպելական խոչընդոտները, որոնք գոյութիւն ունեն մեր իրականութեան մէջ առհասարակ մամուլի համար, լինի այն վրացական կամ հայկական, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչ ասել է քսան տարիների ընթացքում պահպանել գոյութիւնը նման մի հանդիսի:

Ահա այսպիսի մի հանդիսի խմբագրութիւնն է այսօր տօնում իր գոյութեան քսանամեակը:

Եւ մենք սրտի անհուն բերկրանքով շնորհաւորելով «Ջէջիլիի»՝ մանուկների այդ անկեղծ բարեկամ հանդէսի համակրելի տօնախմբութիւնը, մաղթում ենք նրան անսայթաք առաջխաղացութիւն այսուհետև ևս:

Յ. Գասպարեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Բագու, 8 փետրվարի

Այսօր տեղիս դատարանում մի գործ քննվեց, որը պարզ կերպով լուսաբանում է տեղիս հայութեան բարոյական անկման աստիճանը:

Յակոբ Ասլանեան ազգանունով գանձակեցի մի արհեստաւոր, որը 10 տարուց աւելի է ինչ ամուսնացած է, կնոջ հետ պահում է նաև մի սիրուհի: Օրինաւոր կնոջից Ասլանեանն ունի 7 տարեկան մի որդի, որին մօրն է յանձնել առանց ապրելու որևէ միջոց տալու: Դժբաղդ կինը քանիցս դիմել է տեղիս հոգ. իշխանութեանը, գանգատվել իր վիճակից, բացատրել ամուսնու ոչ օրինական վարմունքը, նրանից ստացած ծեծը, իր ամուսնու սիրուհու Թուքը և այլն, բայց հոգ. կառավարութեան ներկայացուցիչը միշտ էլ խորհուրդ է տուել հաշտվել...

Այսօր դատարանում մի առանձին պատկեր բացվեց: Այդ սիրուհին ունեցել է իր օրինաւոր ամուսնուց մի հասունացած աղջիկ, որին մայրը (Ասլանեանի սիրուհին) վաճառած է եղել մի Թուրքի, որը, առանց խեղճ աղջկայ գիտութեան, պատրաստված է եղել գիշերը փախցնելու: Սակայն հարևանները կողմնակի կերպով ծանօթ լինելով վաճառման խնդրին՝ իմաց են անում աղջկան՝ մօր «առևտրի» մասին, որից յետոյ աղջիկը իսկոյն փախչում է ոստիկանատուն և յայտնում մօր սխրագործութիւնը:

Ոստիկանութեան կազմած արձանագրութիւնից պարզվում է գործի մանրամասնութիւնը, որից յետոյ գործը յանձնվում է դատական քննիչին: Յակոբը դրամական երաշխաւորութեամբ ազատում է իր սիրուհուն բանտ նետվելուց մինչև գործի քննութիւնն ու դատավարութիւնը:

Դատարանը այդ կնոջը վճռեց երկու ամիս բանտ:

Կնոջը պաշտպանում էր Յակոբի վարձած փաստաբանը:

Ս. Գարագաշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Փետրվ. 12-ին քաղ. քաղլխի պաշտօնակատար Խատիսեան և ձայնաւոր բժշ. Գ. Թումանով ներկայացան Կովկասի Փոխարքային Թիֆլիսում պօլիտեխնիկում հաստատելու հարցի առիթով:

◆ Կովկասի Փոխարքան, համաձայն Թիֆլիսի ֆրանսիական հիւպատոսի միջնորդութեան, Թոյլատրեց յիշեալ հիւպատոսին հանգանակութիւն բանալ Կովկասի փոխարքայութեան սահմաններում յօգուտ Պարիզի հեղեղից վնասվածների:

◆ Արդէն Պետերբուրգ մեկնեց քաղ. վարչութեան անդամ բժշ. Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկը քաղաքային 3 միլիօն փոխառութեան հարցի համար: Քաղ. վարչութիւնը օգտվելով նրա մեկնելուց՝ յանձնարարել է նրան միջնորդութիւն յարուցել բարձր կառավարական հաստատութիւններում՝ շտապեցնելու, որ քաղաքին վճարվի պետական գանձարանի պարտքերը, յետաձգելու քաղաքից առնվող տուրքերը յօգուտ պետական գանձարանի և շտապեցնելու Թիֆլիսում դպրոցական շինարարութեան հարցը ընդհանուր ուսում մտցնելու հետ:

◆ Յիշեցնում ենք, որ այսօր, ցերեկվայ ժամը 12-ին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նշանակված է նոր վերաբացված Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան առաջին ընդհանուր ժողովը:

◆ Ստացանք Հաւլաբարում հիմնված հասարակական կլուբի կանոնադրութիւնը: Անդամ գրվել կարող են երկու սեռին պատկանող անձեր: Տարեկան անդամավճարն է 12 րուբլի: Կլուբի նպատակն է միջոց տալ անդամներին համախմբվելու հասարակական-կուլտուրական շահերի և խելացի զուարճութիւնների ասպարէզներում: Անդամ գրվել ցանկացողները կարող են դիմել կլուբի աւագներին, որոնք են՝ Կավլիշվիլի (Խօջայեվսկի, փողոց № 7.), Ա. Ասլամազով (Մախաթի նրբանցք № 4), Ա. Ապրեմով (Թիֆլիսի քաղաքային տանը, հաշուապահական բաժնում, առաւօտեան ժամը 10-ից մինչև 3-ը) և ուրիշները: Կլուբի գործերը ղեկավարում է 11 հոգուց բաղկացած խորհուրդը, որը ընտրում է իր միջից նախագահ, փոխ-նախագահ, գանձապահ և քարտուղար:

◆ Կովկասեան Կայսերական Բժշկական Ընկերութիւնը կազմակերպում է ժողովրդական ընթերցումներ իր շինութեան մէջ (Ալէքսանդրեան այգու մօտ): Այսօր տ. Վարդանեանը երեխաների համար հայերէն ժ. 10—11-ը կը կարդայ «Առողջութեան ծառը». տ. Ցիցկիշվիլին վրացերէն ժ. 11—11½-ը՝ «Ինչ արեց օրօրոցի երգը». տ. Աստուրեանն ժ. 11½—12½-ը՝ «Առողջութեան ծառը»: Հասակաւորների համար մարդու անատոմիայի և ֆիզիօլօգիայի մասին հայերէն կը դասախօսէ բժ. Ն. Խատիսեանը: Վրացերէն բժ. Գամրաշիձէն կը դասախօսէ «Ալկոհօլիզմի» մասին:

◆ «Մշակի» երէկվայ համարի (№ 33) Ներքին լուրերի բաժնում Եւպատորիայից մի հեռագիր էր տպված ի հերքումն «Մշակի» № 26-ում տպված՝ Տ. Նազարեանի գրութեան: Այդ հեռագիրն ուղարկել է մեզ ուսուցիչ Թումանեան:

◆ Ի լրումն մեր հաղորդած տեղեկութիւնների տէր-Եղնիկ քահանայի սխրագործութիւնների մասին, հարկաւոր ենք համարում յայտնել հետևեալը: Առաջին, առաջնորդը կամ կօնսիստորիան ամենևին չեն յայտնել նահանգապետին, ինչպէս կամենում է հաւատացնել տէր-Եղնիկը, թէ Վանքի միաբանները աղաւնու պէս մաքուր են դուրս եկել և նրանց վերաբերմամբ բոլոր գրվածները զրպարտութիւն են: Ընդհակառակը, առաջնորդը նոյնն է գրել նահանգապետին, ինչ որ զեկուցել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, իսկ այդ զեկուցումը պարզ ցոյց է տալիս, որ զեղծումն է կատարված: Երկրորդ, տէր-Եղնիկ քահանան մի քանի տարի առաջ մի նամակ է գրում Խօջիվանքի գերեզմանատան կառավարչին, իբր՝ նախագահ հոգեւորականների խնամակալական գանձարանի վարչութեան, մինչ նա նախագահ չէր, և ստանում է ծածուկ 153 րուբլի փող: Երբ այդ խարդախութիւնը բացվում է, 1906 թ. միաբանների քահանայական ընդհանուր ժողովը որոշումն է կայացնում այդ խաբեբայութեան համար այլևս թոյլ չը տալ տէր-Եղնիկին մասնակցել ոչ մի ժողովի, մինչև որ խաբեբայութեամբ ստացած 153 րուբլի գումարը չը վերադարձնէ: Երրորդ, 1905 թ. մեռնում է հարուստ Բաբանասեանը, որի թաղման հրաւիրվում են առաջնորդը և շատ քահանաներ: Երկար ժամանակ ոչ առաջնորդը և ոչ էլ քահանաները իրանց ժամոցը չեն ստանում. վերջապէս պարզվում է, որ տէր-Եղնիկը ստացել է թէ առաջնորդին և թէ քահանաներին հանգուցեալի ժառանգների կողմից յատկացված նուէրը և իւրացրել:

Թէ Վանքի եկեղեցու միաբաններին կտակված գումարների վերաբերմամբ կատարված զեղծման և թէ տէր-Եղնիկի այդ երկու նոր երևան եկած խարդախ գործողութիւնների մասին առաջնորդը մանրամասն զեկուցել է Ամենայն Հայոց Կաթողիկոսին, որը կանէ, անշուշտ, վերջնական որոշումը և կարգադրութիւնը:

◆ Ալէքսանդրապօլում բացվել է կանանց ընկերութեան բաժանմունք: Գրվել են մօտ 70 անդամ:

◆ Ինժեներ Կուրդիանին մի նախագիծ է առաջարկել քաղ. վարչութեան այն մասին, որ անհրաժեշտ է այժմեանից մի երկրորդ ջրանցք կառուցել դէպի Նաւթլուղ այնտեղի ջրի մատակարարութիւնը ընդարձակելու նպատակով: Ջրանցքի կառուցումը Կուրդիանի հաշւով կը նստէ 75,000 ր.: Զեկուցագիրը մօտիկ ապագայում կը յանձնվի քաղ. դումայի քննութեան:

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը Երմօլայեվը ցերեկով կը դասախօսէ քաղաքական անտեսութեան մասին: Դասախօսութիւնից յետոյ կը լինի ներկայացում սիրողների մասնակցութեամբ:

◆ Թիֆլիսի էլեկտրաքարշի վերատեսուչը արդէն կարգադրեց նստափոխ տոմսակների վրա ժամանակի սահմանափակում չը նշանակել:

◆ Ինժեներ-էլեկտրոտեխնիկ Նալբանդեանը քաղ. վարչութեանը ներկայացրեց իր կազմած նախագիծը քաղաքի էլեկտրական լուսաւորութեան մասին:

◆ Թիֆլիսի նահանգական ատեանի որոշմամբ 2-րդ քաղաքամասի պրիստաւ Դաւիդովի և խուզարկու բաժնի նախկին պետ Եւստուշեվսկիի դէմ քրէական գործը դադարեցված է: Յիշեալ պաշտօնեաները մեղադրվում էին Դաւիթ Աւան-Իգլարշեանի որդուն գերելու գործի քննութիւնը դիտաւորեալ կերպով սխալ ճանապարհով տանելու մէջ:

◆ Այսօր, ամսիս 14-ին, Գիւղատնտեսական Վարկի Ընկերութեան դահլիճում կը կայանայ Վրաց Դրամատիքական Ընկերութեան ընդհանուր ժողովը, նոր վարչութիւն ընտրելու և մի շարք ընթացիկ խնդիրներ քննութեան առնելու համար:

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Տ. Մելիքեանի յօբելեանը

Յիշեցնում ենք, որ վաղը, երկուշաբթի, փետրվ. 15-ին, նշանակված է դերասանուհի տիկին Վ. Մելիքեանի յօբելեանական ներկայացումը:

Լիայոյս ենք, որ հայ հասարակութիւնը այս անգամ գոնէ կը լցնի թատրոնը յայտնելու իր յարգանքը բազմամեայ աշխատաւորին:

Ներկայացման ծրագիրը կազմված է այնպէս, որ տիկին Մելիքեանը հանդէս գայ իր սիրած դերերում:

Վրաց դերասանների խմբի մասնակցութիւնը վաղվայ ներկայացման աւելացնում է ներկայացման հետաքրքրութիւնը:

Տիկին Մելիքեանը երկար ժամանակ խաղացել է նաև վրաց բեմի վրա և վայելում է այնտեղ լաւ յիշատակ:

—

Ծերացած դերասանների օգտին

Ծերացած դերասանների օգտին Թիֆլիսում տրված երեկոյթը ունեցաւ մեծ աջողութիւն:

Արտիստական Ընկերութեան Թատրոնը և կօնցերտային դահլիճը լիքն էին Թատրասէր հասարակութեամբ:

Երեկոյթի կազմութեանը մասնակցում էին թէ Արքունական և թէ Արտիստական Թատրոնների երգիչները և դերասանները:

Միացած ույժերով և ոգևորութեամբ առաջ տարված գործը տուեց լաւ հետևանքներ և երեկոյթը դուրս եկաւ թէ հետաքրքրական և թէ նիւթական կողմից նպաստաւոր:

Նախ ներկայացվեց «Գեղեցիկ Հեղինէ» օպերետը բազմաթիւ նորամոյծ տեղական սրախօսութիւններով, ապա տեղի ունեցան մի շարք համերգական կատարումներ, պարեր ըմբշամարտեր և զաւեշտական տեսարաններ:

Մեծ աջողութիւն ունեցան երգչուհի Արդսանիական երգուպարով, Վիկշեմսկայա, Բելեաեվ, Բարատով, Զինովիեվ, Բօրսկայա, Սարնեցկայա և ուրիշները բազմատեսակ երգերով և խաղերով: Երգիչ Ղուկասեան մեծ ճաշակով երգեց հայերէն «Ո՜հ ինչ անուշ» երգը: Օպերային խումբը երգեց «Եւգենիյ Օնեգինի» մի գործողութիւնը և դրանով պատճառեց մեծ հաճոյք հանդիսականներին:

Սիրող

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկ, շաբաթ, ի յիշատակ հանգուցեալ տաղանդաւոր դերասանուհի Կոմիսարժեվսկայայի հոգեհանգիստներ կատարվեցին Արքունական Թատրոնի ֆոյէում, ժամը 2-ին, և Արտիստական Ընկերութեան աւագների նախաձեռնութեամբ զինուորական տաճարում՝ ժամը 3½-ին: Արքունական Թատրոնում կատարված հոգեհանգստի ժամանակ երգում էր օպերային արտիստների խումբը:

◆ Շուտով հայ երգիչ Ղուկասեանի բենեֆիսը կը լինի Արքունական Թատրոնում:

◆ Դերասան Պ. Արաքսեան լոյս է ընծայել նոտագրած և դաշնամուրի ներդաշնակութեան համար յարմարեցված մի երգ «Хочу тебя» (Ուզում եմ քեզ) վերնագրով: Դա կիսացիգանական բնաւորութեամբ մի երգ է հասարակ եւլեջներով, հաճելի եղանակով, թեթև բովանդակութեամբ, սիրային զեղումներով: Գինն է 40 կոպէկ: Հրատարակված է Ռոստովում:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

ԹԷՕԴՈՍԻԱՅԻՆ ՋՈՒՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ *)

Ուսումնասիրելով նոր աշխատանքներն ու ստացված արդիւնքները, ես համոզվեցի, որ որոշ չափով սխալ է այն կարծիքը, իբր թէ երկրիս ջրերի քանակը փոքրանում է և նրան այդ պատճառով մահ է սպառնում: Մի քանի շատ աչքի ընկնող երևոյթներ պարզեցին վերջնականապէս, որ այդ եղանակով կենդանի ջուր կարելի է ստանալ և ստացվում է այնպիսի տեղերում, ինչպէս Սուդանը, Ալժիրական Սահարան, Ֆէզը, Արաբիան, Տունիսն ու Տրիպօլիսը, Արալօ-Կասպիական անապատն ու Գադամէս, մինչդեռ վերջինս բոլորովին զուրկ է անձրևներից: Նոյն այդ աշխատութիւնն ինձ հասցրեց այն եզրակացութեան, որ այդ սիստեմով էր ջուր գտնում և գտած աղի ջրերը քաղցրացնում Մովսէսն անապատում, այդ ասորաբաբելական գիտութեան և քաղաքակրթութեան քաջածանօթ տիտանը: Ղրիմի թերակղզու վրա կան հրաշալի ծովափնեայ տարածութիւններ, որոնք ժամանակով ծածկված են եղել գեղեցիկ այգիներով, ընդարձակ գիւղերով ու քաղաքներով և նրանց բարձր կուլտուրական կեանքը խանգարվել է մոնղոլա-թաթարական արշաւանքների շնորհիւ, իսկ վերջին 126 տարիների ընթացքում Ենիկալէն, Կերչը, Թէօդոսիան, Եւպատորիան, Հին-Ղրիմը Սուդակն ու հարիւրաւոր գիւղերը զրկվել են իրանց պատմական խանութներից, քեհրեզներից և նրանց մատակարարած ջրից: Անձամբ այցելելով այդ տեղերը, ես իւրաքանչիւր քայլափոխում հանդիպում էի հսկայական ջանքերով շինված ջրանցքների մնացորդների, որոնցից շատերը լուսանկարեցի որպէս ասածներիս ապացոյց. դրանցից շատերը դեռ մինչև այսօր տալիս են պատուական խմելու ջուր: Դիտողութիւններիս արդիւնք առաջին զեկուցումս կարդացի Սիմֆերոպոլի նահանգական զեմստվոյին վարչութեան և գիւղատնտեսական ընկերութեան նիստին, երկրորդը՝ Սեւաստոպոլում, երրորդը՝ Թէօդոսիայի գաւառական զեմստվոյի նիստին, ապա Կերչում, Եալտայում և ապա անցեալ ապրիլի 29-ին հարաւային համառուսական մելիօրատիվ համաժողովին Օդէսսայում և Կայսերական գիւղատնտեսական վարչութեան հրաւիրանոք՝ 2 օր յետոյ նոյն այդ ընկերութեան նիստին՝ նախագահութեամբ պրոֆեսոր Մելիքովի և ներկայութեամբ պրոֆեսորներից շատերի: Զեկուցումներից յետոյ տեղի էր ունենում մտքերի ազատ փոխանակութիւն, հարցեր և բացատրութիւններ և կատարածս աշխատանքը հանդիպում համակրութեան և գոհունակութեան:

Թէօդոսիայի աշխատանքները վարելու համար ես հրաւիրեցի վանեցի Ստեփան Բարխուդարեանին, յատկացրի նրան զուտ արդիւնքի մի երրորդ մասը՝ այն պայմանով, որ 1500 րուբլի ստանալով բանուորների և այլ ծախսուց համար՝ պէտք է տար ինձ օրական 5000 վեդրօ ջուր: Ես վանքումն էի, վանքապատկան այգում և երբեմն էլ կօնսիստորիայի հրամանով քննական գործերով այս կամ այն մերձակայ քաղաքներում: Այդ պարոնն էր որոշել բանուորների օրավարձը, որոնցից չորսն իր ազգականներն էին, և ես գործի այդ մասին չէի խառնվում, որովհետև նրա հետ գրած պայմանը շատ պարզ էր և որոշ: Երկար ժամանակ Կուրուբաշ սարի կողերին աշխատելուց յետոյ, երբ սխալ եղան նրա բոլոր հաշիւները, ջուրը սակաւ և աշխատանքները չափազանց դժուարին, հազիւ կարողացայ փոխադրել տալ աշխատանքները Պրիցէպկա կոչված մասում, որտեղ կարճ խուզարկութիւնից յետոյ գտնվեց ստորերկրեայ ուժեղ գետակ խմելու պատուական ջրով և սկսվեց հորիզոնական տունել փորելու աշխատանքն այդ ստորերկրեայ հոսանքն ամբողջովին բռնելու և գետնի երեսը հանելու: Գտնված էր արդէն հարկաւոր ջուրը: Գործի ամենաառաջող վախճանի մասին ոչ մի կասկած լինել չէր կարող, և ահա այդ պարոնը իր հօրեղբօր, եղբօր որդու, եղբօր և մի բարեկամի շնորհիւ սկսեց անախորժութիւններ գործը ձգձգելու համար, կարծելով որ պայմանաժամն անցնելուց յետոյ իրանք կը դառնան գործի տէրը. և այդ նրանք ասում էին բացարձակ, առանց ծածկելու, մոռանալով որ անցնում է և իրանց պայմանաժամը: Հոկտեմբերից մինչև ապրիլ համարեա թէ բան չէին շինում և շինածն էլ այնքան անկարգ էր և անկանոն, որ նոյն աշխատանքը կրկնվում էր երեք չորս անգամ, իսկ ժամանակի կէսն էլ անցնում էր ծուլութեան և գործադուլների մէջ: Ես արդէն վճարել էի պայմանական գումարից համարեա երեք անգամ աւելին, բայց այդ պարոնի պահանջները ոչ ծայր ունէին և ոչ սահման: Երբ յայտնեցի, որ նրա կամայական պահանջներին ցանկութիւն և հնարաւորութիւն չունեմ բաւարարութիւն տալու, մանաւանդ երբ տեսայ ամենախայտառակ զեղծումներ բանուորների գրքոյկների մէջ, դրանից յետոյ բանուորներն համաձայնվեցին ստանալ ինձանից օրավարձի միմիայն մի մասը մինչև քաղաքին ջուր տալն ու դրամ ստանալը:

Ե. ծ.-վ. Մուրադեան

(Կը շարունակվի)

---

*) Տես «Մշակ» № 33.

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

12 փետրվարի

ԿՕՍՏՐՕՄԱ: Բացված է սիստեմատիկական յափշտակութիւն և բեռների վաճառումն հիւսիսային երկաթուղու գործակալների մասնակցութեամբ:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Նախնական բանտարկութեան տան մէջ կախված գտան տասներկու տարվայ տաժանակիր աշխատանքների դատապարտված ռոմբիստ Սիտնովին:

ԿԻԵՎ: Բացվեց նահանգի այգեգործների համաժողովը: Դուման որոշեց միջնորդել ներքին գործերի մինիստրութեան առաջ, որ թոյլատրվի երկու միլիօն փոխառութիւն զօրանոցներ կառուցանելու բերդապահ զօրքի համար:

աշխարհի մօտ և հայութեան առաջ:

Եւ մեթէ ճիշդ չեն ասում.

— Թողէք մեռեալներին թաղելու իրանց մեռելներին:

Իսկ մենք:

— Մենք հեռու փախչենք նրանցից...

—

Մի այլ յայտնութիւն անում է «Հովիւ» շաբաթաթերթը իր № 4-ում:

«Հայհոյանքը,—գրում է կրօնական-բարոյական այդ թերթը,—մեզ համար վիրաւորական չէ... Լրագրական ներկայ հայհոյանքը մի փող «քշանք է, գուրգուրանք»...

Եւ այսպէս բնորոշելով լրագրական ներկայ հայհոյանքի գեղարուեստական, փաղաքշական արժէքը՝ «Հովիւ» թերթը սկսում է փաղաքշել և գուրգուրալ Հ. Առաքելեանին հետևեալ սիրատոչոր, խանդաղատ բառերով և դարձուածքներով. «լիրբ և անամօթ մարդը, իր կեղտոտ գրչով, տխրահռչակ ղեկավարը, ողորմելի լարախաղաց, խուլիգան թերթ, բարոյական այլանդակ ձեր պատկերը, այլասերված, նողկանքի և արհամարհանքի տարափի տակ մեռնող, զրպարտիչ, բանսարկու, և այլն»:

Թէ Եզնիկ աւագ քահանայ Երզնկեանցի սիրային գուրգուրանքներն ու փաղաքշանքները որ աստիճանի են հասել, դրա համար հարկաւոր է կարդալ կրօնա-բարոյական այդ օրգանի 54-րդ և 55-րդ երեսները, միայն նախապէս պէտք է... քիթներդ բռնէք և ձեռնոցներ ունենաք...

Եւ մեթէ այդ անուշաբոյր մթնոլորտում իրանց լաւ են զգում Գեւորգ Սիմէօնեանը, Գ. Ենգիբարեանը, Pessimist-ը, Ս. Զէյթէգեանը, հայր Եղիշէ Գեղամեանը, Լևոն վարդապետը, Սիոն վարդապետը, Բենիկ վարդապետը և մի շարք անձինք, որոնց հետ կարելի է չը համաձայնվել, բայց միշտ յարգել...

Մեթէ դրանք չեն ասում տէր-հօրը.

— Տէր-հայր, խնայեցէք մեզ, մենք խեղդվում ենք ձեր սիրային բացատրութիւնների մթնոլորտից. իմացէք, տէր-հայր, որ դրա համար կայ տրակտիր և... մի աւելի վատ տեղ...

Եւ այսքան գուրգուրանք և փաղաքշանք գիտէք ինչու. որովհետև տեղական բոլոր լրագիրները, ի միջի այլոց և «Մշակը», ասել են. «Վանքի միաբաններից չորս հոգի վատնել են անձեռնմխելի մի գումար». բայց չէ՞ որ դրա համար կայ մի ուրիշ միջոց—լրացնել այդ գումարը, եթէ իրօք վերցրել են վերցնողները:

Կամ աւելի լաւ՝ պահանջել համազգային ռեվիզիա, ինչպէս այդ և պահանջում է «Հովիւը»: Բայց մենք այստեղ դարձեալ կանգնած ենք ճակատագրական այն դարձուածքի առաջ, որ ասում է.

— Թող մեռեալները թաղեն իրանց մեռելներին:

Իսկ մենք:

— Մենք քիթներս բռնենք և հեռու փախչենք:

— Դիակի հոտ է գալիս, ընթերցող, և՛ թաղողներից և՛ թաղվողներից. դիակի հոտ...

Եւ զարմանալի էլ չէ. մենք «հոգևոր աշխարհումն» ենք:

Սալ-Մոն

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Զինւորական մասնագէտ-բժիշկների
ԵՐԹԵՒԵԿ ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ
Վանքի մեծ փողոց, № 3, Ալէքսանդրեան այգու մօտ
ԽՈՐՀՐԴԻ ՎՃԱՐՆ Է 50 ԿՈՊ.
Տելէֆոն № 481.

Հիւանդների ընդունելութիւնը առաւօտ. ժամը 9½-ից մինչև 5-ը ցերեկվայ:

ԱԽՎԼԵԴԻԱՆԻ—ներքին և երեխաների հիւանդ., ամեն օր՝ 11—12 և կէսը ցեր.:

ԲՈԺՕՎՍԿԻՑ—ներքին, բժշկութիւն ներշնչումով, ամեն օր՝ 4—5 ժամը ցեր.:

ՎՆՈՒԿՕՎ—խիրուրգիական հիւանդութիւններ, ամեն օր՝ 2—3 ժ. ցեր.:

ԳՐԷՑՑ—աչքի հիւանդութիւն., ամեն օր՝ 2—3 ժ.:

ՄՕՆՍԷ—երեխ. և ներքին հիւ. ամեն օր՝ 1—2 ժ.:

ԿԱԼԱՄԿԱՐՕՎ—մանկաբարձ. և կանանց հ., ամեն օր՝ 4—5 ժ., բացի կիրակի օրերից:

ՆՕՎԻՑԿԻՑ—մանկաբարձ. և կանանց հիւանդ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

ՐԻԴԷԼ—ներքին և երեխ. հիւ., ամեն օր՝ 3—4 ժ., կիրակի՝ 10—12 և կէսը:

ՊԱՎԼՕՑԿԻՑ—խիրուրգիական հիւանդ., ամեն օր՝ 4—5 ժ. ցեր.:

Ե. ՁՈՒԴՆՕՎՍԿԻՑ—ջղային, հոգեկան, էլեքտրոտերապիա երկուշ., չորեքշ., հինգշաբթի 4—5 ժ.:

ՏԷՏՐԱՁԷ—սիֆիլիս, վեներ., կաշուի հիւ., ամեն օր՝ 1—3 ժ. ցեր.:

ԿԻՆ ԲԺ. ԽՕՍՍԷԼԻԱՆԻ—կանանց հիւ., երկուշ., չորեքշ., ուրբ., կիրակի՝ 11—12 ժ.:

ԱՍՊԻՍՕՎ—կոկորդի, քթի, ականջի հիւ., ամեն օր՝ 1—2 ժ. ցեր.:

ԲԱԼԴԻՆԱ-ՆՕՎԻՑԿԱՅԱ—քթի, կոկորդի և ականջի հիւ., ամեն օր՝ 11½—12½ ժ. ցեր.:

ՇԱՄԱՇ—խիրուրգ. հիւ., ամեն օր՝ 12—1 ժ.:

ՄԽԻԹԱՐԵԱՆ Ա.—սիֆիլիս, միզասեռ., վեներ. և կաշուի. ամ. օր՝ 9½—10½ ժ. առաւ. Համախորհուրդ, օպէրացիաներ, միզապարկի պատուաստումն, անալիզ, հիւանդ. ստուգումների և ծառաների քննութիւն—առանձին վճարով: Սիֆիլիսի վերաբերմամբ արեան հետազօտութիւն ըստ Wassermann-ի:

(4) 991. 100—20

ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հիւանդանոց

Մշտական մահճակալներով

Թիֆլիս, Միխայլովսկի պր., Միքայէլեան հիւ. դիմաց, 59, տէլ. 1026

Հիւանդների ընդունելութիւն.

Միք. ԱՂԱՋԱՆԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, միզասեռական, սիֆիլիսի և կաշուի հիւ.:

Ն. Ա. ԱԹԵՆԵԱՆՑ—ցեր. ժ. 1—2-ը, ականջի, քթի և կոկորդի հիւանդութիւններ:

Վ. Վ. ՎՆՈՒԿՕՎ—ցեր. ժ. 1—2-ը, վիրաբուժական հիւանդութիւններ:

Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆ—առ. ժ. 11—12-ը, ջղային և ներքին հիւանդութիւններ:

Մ. Պ. ԿԻՄՕՆՏ—առ. ժ. 11—12-ը վիրաբուժական հիւանդութիւններ:

Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ—առ. ժ. 11½—12½-ը, ներքին և երեխաների հիւանդութիւններ:

Ա. Գ. ԿԱԼՄԸԿՕՎԱ-ՎՆՈՒԿՕՎԱ—ցերեկ. 2—3 ժամը, կանանց հիւանդութիւններ:

Բժշկութիւն էլեքտրականութեամբ, մասսաժով և հիպնօզով: Միկրօսկօպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ: Ծաղկի պատուաստումն: Ծծմայրերի քննութիւն: Վճարը խորհրդի համար 50 կ.: Օպերացիաները և համախորհուրդները ըստ համաձայնութեան: Հիւանդների բաժանմունքը բաղկացած է թէ ընդհանուր և թէ առանձին սենեակներից

(կ. ե. ու.) 236. 100—97

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ

Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների:

Ընդունում է հիւանդներին՝

Առաւ. ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը: Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը: Կուկիա, Սեմեոնովսկայա փ. № 16.

Տելեֆոն № 40.

(ե. ու. կ.) 984. 100—57

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այսօր, կիրակի, փետրվարի 14-ին Կովկ. Հայ. Բարեգ. Ընկ. դահլիճում կը կայանայ

ՀԱՄԵՐԳ

Յօգուտ խմբի, ղեկավարութեամբ Մ. ՎԱՐԴԻԿԵԱՆԻ

Տոմսակները վաճառվում են ընկերութեան գրասենեակում առաւօտ. ժ. 12-ից: Տեղերի գները 2 ր. մինչև 50 կոպ.: Սկիզբն է երեկ. ժամը 8½-ին:

181. 1—1

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԿՈՎԿԱՍԱԳԻՏԱԿԱՆ-ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ

Գրադարանը

բաց է

Ընկ. անդամների համար առ. 9—2 և եր. 4—8. Գիտութեամբ պարապողների համար առ. ժամը 8½-ից մինչև գիշերվայ 11½ ժամը: Գրադարանը գտնվում է Վելեամինօվսկայա փողոցում, տուն № 14, բն. № 1.

(կ. ե. հ.) 185. 10—1

Հրաւէր

Կաթուղիկէ ս. Աստուածածնի եկեղեցում (Մէյդանի ս. Գէորգ) ամսիս 14-ին, կիրակի, ժամը 12-ին լինելու է ընդհանուր ծխականների ժողով, չորրորդ և վերջին անգամ. ուստի սրանով հրաւիրում եմ պ. պ. ծխականներին՝ նոյն օրը և ժամին շտապել եկեղեցի՝ մասնակցելու ժողովին:

Հերթական հարցերն են.

1) Տարեկան վերանորոգութեան հաշիւները,
2) Խորհրդակցութիւն ապառիկների մասին,
3) Եկեղեցական շինութեան մէջ եղած բնակարանների հարցը,
4) Ուսումնարանի Դ. բաժանման հարց և
5) Ընտրութիւններ երէցփոխի և հոգաբարձուի:

Գործակալ՝ Գր. ա.-ք. Մանդակունի

(շ. կ.) 168. 2—2

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

«ՏՂԱՄԱՐԴԻ ՍԵՌԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ»

Բովանդ.—սեռակ. գործարաններ. սերմը. սեռական յարաբերութիւն. մերձաւորութեան չափը, ձևը, հասունութիւն. կանոնները. ժուժկալութիւն. օնանիզմ. երազախաբ. սպերմատօրէա. բժշկութիւնը և այլն: Կազմեց մէջից. ֆէլդշէր Ա. ԵՍԱՅԵԱՆ, գինը 30 կոպ.: Այս գիրքը անհրաժեշտ է բոլոր չափահաս ամուրիների և ամուսնացածների համար: Պահանջի և պատուէրների սաստիկ մեծութեան պատճառով խնդրվում է այլևս 50-ից պակաս չը դիմել հեղինակին, այլ Թիֆլիս՝ «Գուտտենբերգ» և «Փարոս» գրավաճառանոցներին:

(օ. մ.) 179. 5—2

---

2 ՌՈՒԲԼՈՎ ՊԻՋԱԿ

Այդպիսի չեղած էժան գնով ուղարկում եմ պատրաստի, կարված, միանգամայն գործն. և գեղ. պիջակ՝ տարվայ ամեն սէզօնին յարմար: Նոյնպէս ուղարկ. եմ պատրաստի շալվարներ, կարված մօդային, գործն. և ամուր կտորից՝ 2 ր.: Պիջակի կամ շալվարի ճանապարհած. 35 կ.: 3 և աւելի առարկ. բերել տալուց՝ իմ հաշւին: Ուղարկ. եմ վերադիր վճ., պօստով, առ. կանխավճ., երաշխաւորութեամբ—եթէ չը հաւանվի՝ յետ եմ ընդունում: Պատուէրները հասցէագրել. фабрик. З. Г. РОЗЕНТАЛЮ, г. Лодзь, № 216.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(ա. օ.) (В. 2782) 44. 33—20

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Ծախվում են հետեւեալ նոր գրքերը.

Ահարոնեան.—Անդունդը—40 կ., Կեանքի վէպը—75 կոպ., Խեղճերը, հատոր երկրորդ—75 կ.: Առաքելեան.—Ձեռնարկ տարրական տրամաբանութեան, հոգեբանութեան և բանասիրութեան—50 կ.: Առաքի.—Գերմանական հիւանդութիւն—20 կ.: Բժ. Արծրունի.—Բժշկի զրոյցներ, Նորածին երեխաների հիւանդութիւնները—5 կ.: Ա. Ջիւանի.—Աշուղ Ղարիբի հէքիաթը հանդերձ երգերով—40 կ., Քեարամի և Ասլիի հէքիաթը հանդերձ երգերով—60 կ., Մելիք Շահի հէքիաթը հանդերձ երգերով—30 կ.: Աբեղեան.—Անկոչ հիւր, պիէս մի գործողութեամբ—25 կ.: Կրիմսկի, թարգ. Բաբգէն վարդապետ.—Մահմեդական աշխարհն ու նրա ապագան—60 կ.: Կոս-Մուռլիկա, թարգմ. Լ. Մելիք-Ադամեանց.—Փոքրիկ Յոլկն ու խլըշիկ նապաստակը—55 կ.: Մոռոնեանց.—Մամիկոնեան տոհմը—30 կ.: Էդուարդ Բերտան, թարգմ. Մխիթարեան.—Մեղուների խնամատարութիւնը, մեղուապահի ուղեցոյցը—1 ր.: Սարգսեան.—Պտղատու ծառերի թշնամիները, և նրանց դէմ կռուելու միջոցները—35 կ.: Վարդանեան.—Անարխիստ, վօդվիլ մէկ արար.—15 կ.: Փափազեան.—Ժայռ, դրամա 4 գործողութեամբ—1 ր.: Քրիստափորեանի—Փնջիկ երգարան—40 կ.: Քամալեանց.—Ազգային առակներ—25 կ.: Յովհաննիսեան.—Բանաստեղծութիւններ—1 ր. 50 կ.: Խատիսեան.—Պատանեկան գրադարան, Գրանդ նաւապետի որդիքը, հեղ. Ժիւլ-Վերնի—30 կ.:

Օտար քաղաքներից պէտք է դիմել. Тифлисъ. Центральной книжной торговли.

179. 1—1

ԱՅԼԵՒՍ ՉԸ ԿԱՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

Եթէ Դուք իսկապէս կամենում էք բժշկվել սիֆիլիսից, տրիպպէրից, շանկերից, բէլից, սեռակ. թուլութիւնից, չերքերից և կամ Ձեր առողջութիւնը քայքայված է օնանիզմից—պահանջեցէք «Հանրամատչելի բժշկարան տղամարդ. և կանանց սեռակ. անդամների գաղտնի հիւանդութիւնների» անունով գիրքը, բաւականաչափ նկարներով և գեղատոմսերով, բաղկացած 250 էջից: Գինը վերադիր վճարով և ճանապարհած. 1 ր. 50 կ.: «Ժողովրդական բժշկարան», ձեռնարկ առանց բժշկի օգնութեան բոլոր հիւանդութիւններից բժշկվելու համար, (բացի գաղտնի հիւանդութ.), մեծերի և երեխաների համար, բաւականաչափ գեղատոմսերով, էջ մօտ 250, գինը՝ վերադիր վճար. և ճանապարհած.—1 ր. 50 կ.: Երկու գրքերը միասին—2 ր. 60 կ. (կարելի է նամակադրոշմով): «Նախապաշտ. բժշկարան ամուսինների համար», էջ 135, գինը 1 ր. 25 կ.: Միակ պահեստը. С.-Петербургъ, Офицерская, 50—224. Ф. Словаку.

(14,28) (П.17284) 158. 2—1

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ

ՅՈՎՍԷՓ

ՄԵԼԻՔ-ՋՀԱՆԵԱՆՑԻ

Тифлисъ, Лермонтовская ул., № 4 (близъ III мужск. гимназіи)

Ընդունում են աշակերտներ գիշերօթիկ և երթեւեկ և պատրաստում են բոլոր միջնակարգ դպրոցների համար:

Աւանդվում են՝ ռուս, հայ, գերման, լատին, և ֆրանսիական լեզուներ:

(ե. հ. կ.) 117: 20—7

ԱԴԱ ՆԵԳՐԻ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Թարգմ. Յ. Յակոբեանի

Բանաստեղծուհու վերջին լուսանկարով:

Բ. տպ. գինը 50 կոպ.

Դիմել՝ «Գուտտենբերգ» գրավաճ. Թիֆլիս: Գրախանութի գրացուցակները ուղարկվում են ՁՐԻ:

(օ. մ.) 170. 3—2

ВѢРНЫЙ ДРУГЪ ЖЕНЩИНЪ

КРЕМЪ КАЗИМИ

МЕТАМОРФОЗА

ПРОДАНО БОЛѢЕ ДВУХЪ МИЛЛІОНОВЪ БАНОКЪ

РАДИКАЛЬНО УСТРАНЯЕТЪ ВЕСНУШКИ, УГРИ, ПЯТНА, МОРЩИНЫ И ДРУГІЕ ДЕФЕКТЫ ЛИЦА

УТВ. ДЕПАРТ. ТОРГ. И МАНУФ. ЗА № 4683

ТРЕБУЙТЕ ПОДПИСЬ

(П15567) 111. 8—3

---

7 ՌՈՒԲ. 25 ԿՈՊԷԿՈՎ

ԵՐԿՈՒ ԶԳԵՍՏԱՑՈՒ!

Տղամարդու եւ կնոջ

Ձմերային կամ աշնանային զգեստի երկու էլեգանտ կտոր՝ տղամարդկանց եւ կանանց՝ ուղարկվում է փոստով, առանց ճանապարհածախսի—7 ր. 25 կոպէկով: (Սիբիր հաշվվում է 85 կ.): Եթէ դուր չը գայ—ֆաբրիկան փողը վերադարձնում է: Տղամ. կտորը 4¼ արշ. անգ. տրիկօ է, ամուր, բրդից, 2 արշ. լայնութեան, նորագոյն նկարներով, իսկ կան. կտորը 8 արշ. տրիկօ «ԱՐԿԱԴԻԱ», բրդից, մօդային նկարներով եւ էլեգանտ: Երկու կտորներն էլ ամեն տեսակ մուգ գոյների: Վերադիր վճ. ուղարկվելուց հաշվվում է 14 կ. յաւելումն (պօստային սակագին): Չորս եւ աւելի կտոր բերել տալուց՝ տղամ. իւրաքանչիւր կտորին կցվում է աստառացու, իսկ կանանց իւրաքանչիւր կտորին՝ աստառացու կաշուէ գօտի—միանգամայն ձրի: Հասցէագրել. г. Лодзь, фабриканту МАРКУ БЕРНШТЕЙНУ. И.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(14, 19) (В. 10681) 139. 3—2

ՓՈՂԸ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ

ամբողջովին նրան, ում մեր ապրանքը դուր չի գայ: 7 ռուբ. 50 կոպ. ուղարկ. եմ 2 կտոր՝ «ԱՆԳԼԻԱԿԱՆ ՏՐԻԿՕ ԲՐԴԻՑ», ամուր եւ մօդային գործուածք, 2 արշին լայնութեան 4¼ արշ. երկար., տղամարդկ. զգեստացու, եւ 8 արշ. տրիկօ—«ՊԱՆԱՄԱ», կանանց համար ամուր եւ մօդային զգեստացու. ճանապարհածախսով, փոստով եւ առանց կանխավճարի: Հասցէն՝ Въ суконную фабрику: МИХАИЛУ ДОМАШЕВИЦКОМУ. ЛОДЗЬ, ящ. 295.

(14) (В. 9201) 125. 2—2

Վերեւի շրջազգեստ!

2 ռուբ. 75 կոպէկով ուղարկում եմ պօստով, վերադիր վճ., կանանց համար պատրաստի վերեւի շրջազգեստ (իւբկա), բրդէ նորագոյն տրիկօյից, ամուր գործուածք, ամեն տեսակ մուգ գոյների, կարված և զարդարված վերջին տարազով:

Նոյն տեսակ շրջազգեստ մաքուր բրդէ Շէվիօտից—3 ր. 25 կ.: Ճանապարհածախք հաշվում է 35 կ.: Երեք շրջազգեստ միասին պահանջելուց՝ ճանապարհածախքը ֆաբրիկայի հաշւին:

Նոյնպէս ուղարկում եմ կանանց բլուզների համար կտորներ, պատրաստմ. գործուածք, շքեղագոյն մետաքսեայ պրօշիվկաներով—կրծքի, թևնոցների և օձիքի վրա, ամեն տեսակ մուգ և բաց գոյների, նոյնիսկ ամենամեծ չափի համապատասխան: 3 կտոր 3 բլուզայի համար՝ 4 ր. 50 կ.: Շրջազգեստի հետ միասին՝ միայն 3 ր. 75 կ. (շրջազգեստի չափը խնդրում եմ ուղարկել՝ վերցված կամ սանտիմէտրով և կամ թելով): Պահանջները—առանց ռիսկի. չը հաւանված ապրանքի փողը վերադարձնում եմ:

Հասցէագրէք՝ ЛОДЗЬ 1-е отд. Фирмѣ М. А. БАБУШКИНЪ. М.

Թղթակցութիւնները ռուսերէն:

(14,21,28) (В. 11309) 160. 3—1

Երեւանի թեմի ծխական դպրոցների տեսչի պաշտօնն ստանձնել ցանկացող անձերը հրաւիրվում են դիմելու Թեմակալ առաջնորդին, ուղարկելով հանգամանօրէն տեղեկութիւններ իրանց ուսման և դպրոցական պաշտօնավարութեան մասին: Թեմական տեսուչը ստանալու է տարեկան 1800 ր. ռոճիկ և առանձին ճանապարհածախս: Պաշտօնավարութեան պայմաններն առհասարակ կարելի է պարզել, բանակցելով թեմ. խորհրդի հետ, որը և կատարելու է թեմական տեսչի ընտրութիւնը:

Դիմումների հասցէն՝ Эривань. Армянскому Епархіальному Начальнику Архимандриту Хорену Мурадбекіанъ.

(ու. կ. հ.) 162. 3—2

Մամուլի տակից դուրս եկաւ և ծախվում է

ՊՏՂԱՏՈՒ ԾԱՌԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

եւ

ՆՐԱՆՑ ԴԷՄ ԿՌՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Պատկերազարդված 41 նկարներով

Անհրաժեշտ ձեռնարկ այգեգործների եւ պարտիզպանների համար:

ԳԻՆՆ է 35 կ. (ճանապարհածախսով. կարելի է 7 կոպ. մարկաներով):

Դիմել՝ Тифлисъ, редакція журн. «Гюхатнтесъ».

(հ. կ.) 110. 8—5

ԵՂԲ. ԱՎՍԱՐԳԻՍՕՎՆԵՐԻ

այգին բաց է Թողնում արտասահմանեան, ռուսական և տեղական լաւ տեսակի պտղատու ծառեր ու դէկօրատիվ բոյսեր:

Հասցէն՝ Ст. Скра (Зак. ж. д.). Կատալօգը ուղարկվում է ՁՐԻ:

(ու. կ. չ.) 108. 15—7

!ԼԱՒ ԵՒ ԷԺԱՆ ԱՆԿԱՐԵԼԻ Է!

3 ր. 30 կոպէկով պօստով ուղարկում եմ, վերադիր վճ. և առանց կանխավճ. «ՕԼԻՄՊ» շէվիօտի մի ամբողջ կտոր՝ 4¼ արշ. տղամ. զգեստի համար: Ծրարելը և ճանապարհածախսը իմ հաշւին: Չը նայած անչափ էժանութեան, այդ կտորը բրդից է (ոչ բամբակից) և ամենալաւ կտորների յատկութիւնն ունի. միանգամայն ամուր է, գործնական, գեղեցիկ: Գոյները՝ սև, մուգ կապոյտ, շագանակագոյն և ձիթագոյն: Երեք և աւելի կտոր պահանջելուց՝ բոլոր կտորներին կցում եմ աստառացուներ իբրև

ՊՐԷՄԻԱ ՁՐԻ

Պահանջները հասցէագրել. г. Лодзь, № 72 г., фабриканту ЗИГМУНТУ РОЗЕНТАЛЮ

Թղթակցութիւնները ռուսերէն:

(փ. 14, 17) (В. 2776.) 39. 3 2

Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնը

սրանով յայտնում է ի տեղեկութիւն ընդհանուրի, որ ներկայ տարվայ մարտի 7-ին, ցերեկվայ ժամը 12-ին Ժողովրդական Տան շինութեան մէջ նշանակված է, համաձայն նոյեմ. 15-ի 1906 թ. օրէնքի, ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԺՈՂՈՎ (գործակատարների), որոնք պաշտօնավարում են Թիֆլիսի առևտրական հիմնարկութիւններում, ընտրելու իրանցից 6 անդամ խառն կօմիսսիայի համար, որ պաշտօն ունի կազմելու պարտադիր որոշումներ՝ վերաբերեալ առևտրական հիմնարկութիւններում ծառայողների նորմալ հանգստութիւնը ապահովելուն:

Ժողովին իրաւունք ունեն ներկայ լինելու հասակն առած ծառայողները (գործակատարներ), իւրաքանչիւր առևտր. հիմնարկութիւնից մի հոգի, որը պէտք է ընտրված լինի նոյն հիմնարկութեան հասակն առած ծառայողների (գործակատարների) կողմից:

Ժողովին մասնակցողները մուտքի ժամանակ պիտի ներկայացնեն հաւատարմաթուղթ՝ ստորագրված այն անձերի կողմից, որոնք ընտրել են նրանց իրանց ներկայացուցիչ: Ժողովին մասնակցել կարող են միայն այն ձեռնարկութիւնների և հիմնարկութիւնների ծառայողներ (գործակատարներ), որոնք 1909 թ. ենթարկված են եղել պրօմիսլային հարկատուութեան:

(14, 28. մ. 3) 172. 3—1

ԹՂԹԷ ՏՈՊՐԱԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

„ԶՎԵԶԴԱ" ընկերութեան

Բարօնսկայա եւ Մեծ-վանքի փող. անկիւն, Թառումեանի տպարանին կից:

Յայտնվում է ի գիտութիւն հասարակութեան, որ վերոյիշեալ գործարանում պատրաստվում են թղթէ տոպրակներ զանազան մեծութեան, ինչպէս հասարակ, նոյնպէս և գարմօնի, աստառով և ըստ ցանկութեան՝ պատուիրող ֆիրմայի անուան մակագրութեամբ: Տոպրակները պատրաստվում են արտասահմանից ստացված էլեկտրաշարժ մեքենայի միջոցով: Պատուէրներն ընդունվում են շատ ձեռնտու գներով և կատարվում են շուտափոյթ և բարեխղճօրէն: Օտար քաղաքներից պատուէրներն ուղարկվում են վերադիր վճարով՝ ստանալով կանխավճար արժէքի առնուազն ¼ մասը:

Նոյն տեղում ընդունվում են և տպագրական ամեն տեսակ պատուէրներ:

Հասցէն (Նամակների համար. Тифлисъ. фабрика бумажныхъ мѣшковъ Т-ва „ЗВѢЗДА".
(Հեռագիրների համար. Тифлисъ, фабрика „ЗВѢЗДА".

(հ. կ.) 132. 10—4

Այսօր, փետրվարի 14-ին, ցերեկվայ ժամը 12-ին

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

(Արաս-Արադսկայա, սեփ. տ.)

կայանալու է

Կովկասի Հայոց Հրատարակչական Ընկերութեան

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Զբաղմունքի առարկաներն են՝ ա) Կանոնադրութեան ընթերցումը և՝ բ) Վարչութեան, Խմբագրական և Վերստուգիչ յանձնաժողովների անդամների ընտրութիւնը:

Անդամավճարը 3 ր.: Գրվել կարելի է բոլոր հայ օրաթերթերի խմբագրատներում, իսկ նիստի օրը՝ դահլիճ մտնելիս: Գաւառից դիմել՝ Тифлисъ. Степану Лисиціану.

(ու. կ.) 162. 2—2

Блоокеръ Какао

Թէյից եւ սուրճից առաւելագոյն

ոչ միայն իր դուրեկան համով,

այլ և իր սննդարարութեամբ:

Վաճառվում է կօլօնիալ և գեղատնային ապրանքների բոլոր յայտնի խանութներում,

ԹԻԹԵՂԵԱՅ ԱՐԿՂԻԿՆԵՐՈՒՄ 1/1, 1/2, 1/4, 1/8 **Ֆ.**:

Վաճառվում է Կովկասեան Ընկ. գեղատնային ապրանքների խանութում՝ Թիֆլիսում և Բագւում, Պ. Գուրգէնբէգովի և Մ. Նազարբէկովի մօտ:

(փ. 14, մ. 14) (П. 153500) 1235. 4—3

ԳՐԱՒՎԵՑԷՔ! ԳՐԱՒՎԵՑԷՔ!

ՄԻԱՅՆ 2 ր. 60 կ. (Փոխանակ 5 ր. 50 կ.)



Դուք մեծ բաւականութիւն կը պատճառէք ձեզ, ձեր ընտանիքին և հիւրերին, եթէ ձեզ կը բերէք ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԽՈՐԿԱՆ ՑՂԿՎԱԾ ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ՆՈՒԱԳՈՂ ՀԱՅԵԼԻ—ԶՎԱՐՃԱՐԱՆԱԿԱՆ ԼԱՒ ՇԻՆՈՒԱԾՔ, որ նուագում է ինքն իրան, բարձրաձայն, դուրեկան և երկար ժամանակ գեղեցիկ և ուրախ ռուսական երգեր՝ ամենալաւ արտադրութիւններ—վալսեր, լէհակ. պարեր, քայլերգեր, օպէրաներ, ժող. երգեր և այլն՝ ըստ ընտրութեան: Բացի այդ, հայելին ունի ՋԵՐՄԱՉԱՓ, որը ճշգրիտ ցոյց է տալիս տաքութեան աստիճանը և իր շքեղութեամբ ծառայում է՝ իբրև սենեակի ամենալաւ զարդ:

ԳԻՆԸ ՓՈԽ. 5 Ր. 50 Կ. ՄԻԱՅՆ 2 Ր. 60 Կ., 2 հատը 5 ր.

Նոյն տեսակ հայելի ԺԱՄԱՑՈՅՑՈՎ (տես նկարը), նուագող և ջերմաչափով՝ № 2—3 Ր. 75 Կ., № 2½—4 Ր. 50 Կ.: Ուղարկվում է ստուգված և երաշխաւորութեամբ, վերադիր վճ. և առանց կանխավճ.: Առանց ժամացոյցի հայելու ճանապարհածախքը՝ Եւրոպ. Ռուսաստ. 40 կ., Արևմտ. Սիբիր 60 կ., Արևել. Սիբիր 80 կ., իսկ ժամաց. ունեցողը՝ Եւր. Ռուս. 75 կ., Արևմտ. Սիբիր 1 ր. 15 կ., Արևել. Սիբիր 1 ր. 50 կ.: Սիբիր և Միջին-Ասիական երկիրները ժամացոյց-հայելին առանց 1 ր. կանխավճ. չէ ուղարկվում: Պատուէրները խնդրում ենք հասցէագրել. Въ „БАЗАРЪ НОВОСТЕЙ". Варшава, Грибная пл № 6—69.

Թղթակցութիւնները ռուսերէն լեզուով:

(փ. 14, 28, մ. 15, 30, ապ. 11) (В.4334) 47. 7—3

„ՊՐՕՎՕԴՆԻԿ"

1897 թ.

ПОСТАВЩИКЪ ДВОРА ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА

1888

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՌԻԳԱՅՈՒՄ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ ՊԱՀԵՍՏ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Սօլօլակսկայա փող., № 4

ԱՌԱՋԱՐԿՎՈՒՄ Է ՄԵԾԱՔԱՆԱԿ ԵՒ ՀԱՏՈՎ՝

Ռէզինէ, կանեփէ և ուրիշ թևնոցներ ամեն ինչի համար.

Ռէզինէ տեխնիկական և էլեքտրօ-տեխնիկական առարկաններ և լուսանկարչական պիտոյքներ.

Իրեղէններ եղջերեայ ռէզինից և էբօնիտից.

Առանձնացնող և կաբէլային պիտոյքներ.

Խիրուրգիական և բժշկական ռէզինէ իրեղէններ.

Ռէզինէ խաղալիքներ և խաղագնդակներ.

Ռէզինէ գալանտերէյնի ապրանքներ.

Ջնջոց ռէզին «Слонъ» մարկայով.

№ 1 101. 0—9

Типографія „Экономія" Большая Банкская № 3.